



ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման  
հանրապետական կենտրոն  
National Center for AIDS Prevention,  
Ministry of Health, Republic of Armenia

# ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՅԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ

## ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ - 2018



**ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**ՀՏԴ 616.97**

**ԳՄԴ 52.63**

**Մ 356**

**Մ 356**

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության ուղեցույց, 2018թ. – Երևան: «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2018. – 180 էջ:

Գրքում ներկայացված է ՀՀ առողջապահության նախարարի 2018թ. մարտի 15-ի թիվ 673-Ա հրամանով հաստատված «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության» ուղեցույցը:

**ՀՏԴ 616.97**

**ԳՄԴ 52.63**

**ISBN 978-9939-1-0733-2**

© «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ



**ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման  
հանրապետական կենտրոն**

# ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## ԱՄՓՈՓՈՒՄ

### **Նպատակ**

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության ուղեցույցի նպատակն է օգնել առողջապահության կազմակերպիչներին, բժիշկ-համաճարակաբաններին, այլ մասնագիտության բժիշկներին՝ կայացնելու ապացուցողական բժշկության վրա հիմնված, գիտականորեն հիմնավորված կլինիկական և կազմակերպչական որոշումներ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողություն իրականացնելիս:

### **Մեթոդաբանություն**

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության կլինիկական ուղեցույցը մշակվել է ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի (այսուհետ՝ ՁԻԱՀ-ի ԿՀԿ) մասնագետների կողմից ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. թիվ 1527-Ա հրամանով հաստատված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունների ազգային ուղեցույցի և գործնական աշխատանքի ձեռնարկի [1] հիման վրա, որը լրամշակվել, վերանայվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) և ՄԱՁԻԱՀ-ի ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողությանն առնչվող ժամանակակից առաջարկների հիման վրա: Ուղեցույցի մշակման աշխատանքային խմբում ներգրավվել են նաև մասնագետներ այլ բժշկական կազմակերպություններից:

Տեղեկատվության որակը գնահատելիս և առաջարկների ուժգնությունը որոշելիս հիմք է ընդունվել առաջարկների ուսումնասիրման, մշակման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE): Ապահովվել է ուղեցույցի դրույթների վերաբերյալ հեղինակային խմբի բոլոր անդամների փոխհամաձայնությունը: Տեղայնացման աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանությամբ: Առաջարկների հիմնական մասը չունի աստիճանակարգում ըստ ուժգնության և ապացույցների որակի, քանի որ դրանք գործունեության վաղուց կիրառվող ստանդարտներ են, որոնց համար չեն իրականացվել (և անհիմաստ է անցկացնել) պատահական բաշխմամբ վերահսկվող հետազոտություններ կամ գերվերլուծություններ:

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության կլինիկական ուղեցույցը նախատեսված է բուժաշխատողների համար, որոնք իրականացնում են

ՄԻԱՎ վարակի դեպքերի հայտնաբերում, պացիենտների բժշկական օգնություն և սպասարկում, ընդգրկված են ՄԻԱՎ վարակի համաճարակաբանական հսկողության գործընթացում:

Այն կարող է օգտակար լինել առողջապահության կազմակերպիչներին, բժիշկ-համաճարակաբաններին, հանրային առողջապահության մասնագետներին, վարակաբաններին, լաբորատոր և այլ մասնագետներին, ՄԻԱՎ վարակին առնչվող ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպություններին, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրերին տեխնիկական և ֆինանսական աջակցություն տրամադրող կազմակերպություններին:

Ուղեցույցը կարող է վերանայվել պարբերաբար (հինգ տարին մեկ) և ըստ անհրաժեշտության ոլորտում նոր մոտեցումներ, առաջարկություններ ի հայտ գալու դեպքում:

### **Արդյունքներ**

Ապացուցողական մոտեցումների կիրառմամբ ուղեցույցում ներկայացվել են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության նպատակները և խնդիրները, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ընթացիկ և ընտրանքային հսկողության սկզբունքները, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների որակի ապահովման մոտեցումները, հետազոտությունների որակի հսկողությունը, բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի (այսուհետ՝ ԱՎԵԽ) չափերի գնահատման սկզբունքները, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան դեպքերի գրանցումը, համաճարակաբանական հսկողության ժամանակ էթիկական հարցերը, ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողության և հակառետրովիրուսային (այսուհետ՝ ՀՌՎ) դեղերի տոքսիկության նկատմամբ համաճարակաբանական հսկողության սկզբունքները, համաճարակաբանական հսկողության համակարգի արդյունավետության գնահատումը:

### **Հեղուկություններ**

Ապացուցողական մոտեցումների վրա հիմնված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողությունը համաճարակի զարգացման միտումները կանխատեսելու, արդյունավետ կանխարգելիչ ծրագրեր մշակելու և ներդնելու, իրականացված միջոցառումների արդյունավետությունը գնահատելու, ՄԻԱՎ վարակի տարածման կասեցման հիմքն է:

### **Բանալի բառեր**

**ՄԻԱՎ վարակ, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողություն, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հեղազոտություններ, ՄԻԱՎ վարակի ախտորոշում, ՄԻԱՎ-ի դեղակայունության**

**հսկողություն և ՀՌՎ դեղերի տրքսիկության նկատմամբ համաճարակաբանական հսկողություն, ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, մշակման և գնահատման դասակարգման համակարգ, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագիր:**

**Պատասխանատու համակարգողներ**

- Ս.Գրիգորյան՝ ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն, ք.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի «ՄԻԱՎ վարակ» դասընթացի գիտական ղեկավար
- Ա.Վանյան՝ ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի գլխավոր տնօրեն, ք.գ.թ.

**Աշխատանքային խմբի անդամներ**

- Ա.Պապոյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժնի վարիչ
- Ժ.Պետրոսյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կանխարգելման բաժնի վարիչ
- Վ.Արզաքանյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ
- Տ.Գրիգորյան՝ բժիշկ-վիճակագիր, ՁԻԱՀ-ի ԿՀԿ
- Է.Հովհաննիսյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ
- Ք.Լալայան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ
- Ս.Մարտոյան՝ բժիշկ-համաճարակաբան, ՁԻԱՀ-ի ԿՀԿ
- Ռ.Հովհաննիսյան՝ բժիշկ-վիճակագիր, ՁԻԱՀ-ի ԿՀԿ
- Տ.Հովսեփյան՝ բժիշկ-վիճակագիր, ՁԻԱՀ-ի ԿՀԿ

**Մասնագիտական խմբագրում**

Ա.Հակոբյան՝ ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրենի տեղակալ բժշկական գծով, ք.գ.թ.

**Խմբագիր**

Ա.Հովհաննիսյան

## **Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Պատասխանատու համակարգողները և աշխատանքային խմբի անդամները հայտարարում են շահերի բախման բացակայության մասին (հայտարարագրերը կցվում են): Սույն ուղեցույցը մշակվել է առանց որևէ ֆինանսական աջակցության:

## **Շնորհակալական խոսք**

Պատասխանատու համակարգողները իրենց երախտագիտությունն են հայտնում աշխատանքային խմբի բոլոր անդամներին, ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը տրամադրած և մասնագիտական ներդրում ունեցած գործընկերներին՝

- Լ.Ջոնսթոն՝ միջազգային փորձագետ
- Լ.Ավետիսյան՝ բ.գ.թ., բժիշկ-համաճարակաբան, առողջապահության կազմակերպիչ, ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի գլխավոր տնօրենի տեղակալ
- Հ.Մանգոյան՝ բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի անէսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի դոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի գիտական ղեկավար, կլինիկական ուղեցույցների և պացիենտի վարման գործելակարգերի ներդրման նպատակով առաջարկներ մշակող հանձնաժողովի նախագահ, «Վարդանանց» ՆԲԿ-ի տնօրեն

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ .....	9
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	10
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	12
II. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ .....	13
III. ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈՒԺԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՈՐԱԿԻ .....	14
IV. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ .....	14
V. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	15
VI. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԴԵՊՔԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ .....	15
VII. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ .....	19
VIII. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԻ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԽՄԲԵՐԻ ՉԱՓԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ .....	28
IX. ԷԹԻԿԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ .....	31
X. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ .....	32
XI. ՄԻԱՎ ՎԱՐԱԿՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ .....	33
XII. ՄԻԱՎ/ՀԱՄԱԿՑՎԱԾ ԵՎ ԶՈՒԳՈՐԴՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ	33
XIII. ՄԻԱՎ-Ի ԴԵՂԱԿԱՑՈՒՆՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ .....	34
XIV. ՀՌՎ ԴԵՂԵՐԻ ՏՈՔՍԻԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ .....	35
XV. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՆՈՐ ԴԵՊՔԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ .....	36
XVI. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ .....	36
XVII. ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ .....	37
XVIII. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ .....	37
XIX. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	39
Հավելված 1. Առաջարկներ_աստիճանակարգված ըստ ուժգնության և ապացույցների որակի .....	42
Հավելված 2. ՄԻԱՎ վարակ դեպքի ստանդարտ սահմանում .....	43
Հավելված 3. ՄԻԱՎ-ի վերաբերյալ սկրինինգային հետազոտությունների ռազմավարություն .....	44
Հավելված 4. ՄԻԱՎ վարակի ախտորոշման նպատակով հետազոտությունների ռազմավարություն (18 ամսականից մեծ երեխաներ և մեծահասակներ) ....	45
Հավելված 5. Մինչև 18 ամսական երեխաների մոտ ՄԻԱՎ վարակի ախտորոշման համար հետազոտությունների ռազմավարություն .....	46
Հավելված 6. Ուղեգիր արյան մեջ ՄԻԱՎ-ի նկատմամբ հակամարմինների հայտնաբերման համար .....	47
Հավելված 7. Ուղեգիր_արյան մեջ ՄԻԱՎ վարակը հաստատելու համար .....	48



Հավելված 8. Շտապ հաղորդում* ՄԻԱՎ վարակի լաբորատոր ախտորոշման.....	49
Հավելված 9. Համաճարակաբանական հետազոտության քարտ (ՄԻԱՎ վարակով պացիենտի) .....	50
Հավելված 10. Համաճարակաբանական հետազոտության քարտ (ՄԻԱՎ վարակով երեխայի).....	53
Հավելված 11. Հաշվառման քարտ (ՄԻԱՎ վարակով պացիենտի) .....	56
Հավելված 12. Ձև 85.....	58
Հավելված 13. Ձև 88 .....	71
Հավելված 14. ՁԻԱՀ դեպքի ստանդարտ սահմանում .....	77
Հավելված 15. ՄԻԱՎ վարակի դասակարգումը մեծահասակների և երեխաների մոտ՝ ըստ կլինիկական փուլերի (ԱՀԿ).....	78
Հավելված 16. Կտրոն .....	80
Հավելված 17. Ձևաթուղթ հետազոտությանը մասնակցելու չափանիշներին անհամապատասխանության .....	81
Հավելված 18. Ձևաթուղթ հետազոտությանը մասնակցելու չափանիշներին անհամապատասխանության .....	82
Հավելված 19. Ձև հետազոտության չափանիշներին անհամապատասխանության .....	83
Հավելված 20. Ձևաթուղթ հետազոտությանը մասնակցելուց հրաժարվելու պատճառների վերաբերյալ .....	84
Հավելված 21. Ձև ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններին մասնակցության վերաբերյալ գրավոր տեղեկացված համաձայնության .....	85
Հավելված 22. Հսկման թերթիկ .....	86
Հավելված 23. Ձև կտրոնների հաշվառման և վարման .....	88
Հավելված 24. Կտրոնների մերժման հարցաշար .....	89
Հավելված 25. Ձև ֆինանսական հաշվետվության .....	91
Հավելված 26. Ձև ԹՆՕ-ների սկրինինգի.....	92
Հավելված 27. Ձև ԿՍԿ-ների սկրինինգի.....	94
Հավելված 28. Ձև ՏՍՏ-ների սկրինինգի .....	96
Հավելված 29. Քաղաքաբնակ միգրանտների սկրինինգային հարցաշար .....	98
Հավելված 30. Հարցաթերթ ԹՆՕ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների անցկացման .....	101
Հավելված 31. Հարցաթերթ ԿՍԿ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների անցկացման .....	116
Հավելված 32. Հարցաթերթ ՏՍՏ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների անցկացման .....	127
Հավելված 33. Հարցաշար քրեակատարողական հիմնարկներում գտնվողների համար .....	141
Հավելված 34. Հարցաշար երիտասարդների համար.....	148
Հավելված 35. Հարցաշար գյուղաբնակ միգրանտների համար.....	153
Հավելված 36. Հարցաշար քաղաքաբնակ միգրանտների շրջանում վարքագծային հետազոտության.....	165
Հավելված 37. ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշներ (ՎԿՑ).....	178

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

<b>ԱՀԿ</b>	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
<b>ԱՆ</b>	առողջապահության նախարարություն
<b>ԱՎԵԽ</b>	առավել վտանգի ենթարկվող խումբ
<b>ԳՍԸ</b>	գործողությունների ստանդարտ ընթացակարգ
<b>ԴՆԹ</b>	դեզօքսիռիբոնուկլեինաթթու
<b>ԹՆՕ</b>	թմրամիջոցների ներերարկային օգտագործող
<b>ԻԲ</b>	իմունաբլոտ
<b>ԻՖԱ</b>	իմունաֆերմենտային անալիզ
<b>ՌՆԹ</b>	ռիբոնուկլեինաթթու
<b>ԿՍԿ</b>	կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կին
<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետություն
<b>ՀՌՎ</b>	հակառետրովիրուսային
<b>ՁԻԱՀ</b>	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
<b>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</b>	«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
<b>ՄԱԿ</b>	Միավորված ազգերի կազմակերպություն
<b>ՄԱՁԻԱՀ</b>	ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագիր
<b>ՄԻԱՎ</b>	մարդու իմունային անբավարարության վիրուս
<b>ՄՄՁԸ</b>	մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանք
<b>ՆԼՈՀ</b>	ներլաբորատոր որակի հսկողություն
<b>ՈԱՀ</b>	որակի արտաքին հսկողություն
<b>ՊՇՌ</b>	պոլիմերազային շղթայական ռեակցիա
<b>ՎԾ</b>	վիրուսային ծանրաբեռնվածություն
<b>ՎԲ</b>	Վեստերն Բլոտ
<b>SUS</b>	տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդ
<b>ՔԿՀ</b>	քրեակատարողական հիմնարկ

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն ուղեցույցում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝
  - 1) **Մարդու իմունային անբավարարության վիրուս (այսուհետ՝ ՄԻԱՎ)** - վիրուս, որն առաջացնում է ՄԻԱՎ վարակ հիվանդությունը և հանգեցնում ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի զարգացման:
  - 2) **ՄԻԱՎ վարակ** - երկարատև ընթացքով քրոնիկ վարակիչ հիվանդություն, որի հարուցիչը ՄԻԱՎ-ն է:
  - 3) **Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ (այսուհետ՝ ՁԻԱՀ)** - զարգանում է ՄԻԱՎ-ով վարակված մարդկանց մոտ, համարվում է ՄԻԱՎ վարակ հիվանդության վերջնային փուլը, բնորոշվում է իմունային համակարգի գործունեության խաթարմամբ, որի հետևանքով օրգանիզմը դառնում է անպաշտպան զանազան վարակիչ և ուռուցքային հիվանդությունների նկատմամբ:
  - 4) **Առավել վտանգի ենթարկվող խմբեր (այսուհետ՝ ԱՎԵԽ)** - թմրամիջոցների ներարկային օգտագործողներ, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք, տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդիկ, քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ ՔԿՀ) գտնվողներ, միգրանտներ:
  - 5) **Որակի ապահովում** - որակի կառավարման համակարգի բաղկացուցիչ, որն ուղղված է որակին ներկայացվող պահանջների կատարման նկատմամբ վստահության ստեղծմանը:
  - 6) **Որակի արտաքին հսկողություն** - գործընթաց, որն իրականացվում է մեկ այլ կազմակերպության կողմից և ուղղված է ապահովելու բոլոր մակարդակներում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների հավաստի արդյունքների ստացումը:
  - 7) **Որակի ներքին հսկողություն (կամ ներլաբորատոր որակի հսկողություն)** - հետազոտության ողջ ընթացքում իրականացվող գործընթաց, որն ապահովում է թեստերի անալիտիկ արդյունավետության մոնիտորինգ:
  - 8) **Հետազոտության ալգորիթմ** - հետազոտության ռազմավարություններում կոնկրետ թեստերի համակցումն ու կիրառման հաջորդականությունը:
  - 9) **Հետազոտության ռազմավարություն** - ՄԻԱՎ վարակի ախտորոշման նպատակով հետազոտության մեթոդների կիրառման և կարգի սահմանման մոտեցումներ:
  - 10) **ՄԻԱՎ-ի նկատմամբ կարգավիճակ** - ՄԻԱՎ-ի վերաբերյալ տարբեր հետազոտությունների արդյունքների հիման վրա հետազոտվածի կարգավիճակ, որը կարող է լինել դրական, բացասական, անորոշ: ՄԻԱՎ-դրական կարգավիճակը վկայում է ՄԻԱՎ վարակի հաստատման, ՄԻԱՎ-բացա-

սականը՝ ժխտման մասին: Անորոշ կարգավիճակի դեպքում հարկ կա կատարելու լրացուցիչ հետազոտություն ՄԻԱՎ վարակի առկայությունը հաստատելու կամ ժխտելու նպատակով:

- 11) **ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական հսկողություն** - բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածության գնահատման նպատակով ՄԻԱՎ-ի վերաբերյալ ընտրանքային հետազոտությունների իրականացում:
- 12) **Հետազոտության արդյունք** - մեկ թեստի արդյունք, որը կարող է լինել դրական, բացասական: Դրական արդյունքը վկայում է անալիտի առկայության, բացասականը՝ դրա բացակայության մասին:
- 13) **Թեստի զգայունություն** - անալիտ պարունակող բոլոր նմուշների հայտնաբերման հավանականություն:
- 14) **Թեստի սպեցիֆիկություն** - անալիտ չպարունակող բոլոր նմուշների հայտնաբերման հավանականություն:
- 15) **ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ընթացիկ (ռուտին) հետազոտություն** - ստանդարտ ընթացակարգով ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն և խորհրդատվություն, որն առաջարկում է բուժաշխատողը որևէ պատճառով բժշկական կազմակերպություն դիմած այցելուին տրամադրվող բժշկական ծառայությունների շրջանակում:
- 16) **ՄԻԱՎ-ի վերաբերյալ սկրինինգային հետազոտություն** - լաբորատոր հետազոտություններ՝ ուղղված ՄԻԱՎ վարակի հայտնաբերմանը:

## **I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

2. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողությունը ՄԻԱՎ վարակի համաճարակի զարգացման մասին պատկերացումների անկյունաքարն է: Սա ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխման և համաճարակի վերաբերյալ տվյալների համակարգված, շարունակական հավաքագրում է, ինչը հնարավորություն է տալիս պարզելու ՄԻԱՎ վարակի համաճարակի փուլերը, կանխատեսելու համաճարակի զարգացման միտումները, մշակելու և ներդնելու արդյունավետ կանխարգելիչ ծրագրեր, նաև գնահատելու իրականացված միջոցառումների արդյունավետությունը [2,3,4]:
3. Սույն ուղեցույցի կիրառումը կօգնի գնահատելու Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) Գլխավոր ասամբլեայի կողմից 2015թ. ընդունված մինչև 2030թ. կայուն զարգացման ծրագրով [5], 2016թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով բարձր մակարդակի հանդիպման ժամանակ ընդունված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում քաղաքական հռչակագրով [6], ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի (այսուհետ՝ ՄԱՁԻԱՀ) 2016-2021թթ. ռազմավարական ծրագրով [7], ԱՀԿ-ի ՄԻԱՎ վարակի դեմ առողջապահական ոլորտի 2016-2021թթ. ռազմավարությամբ [8] և եվրոպական տարածաշրջանում ՄԻԱՎ վարակի դեմ առողջապահական ոլորտի պայքարի գործողությունների պլանով [9] սահմանված թիրախներին հասնելու առաջընթացը, առկա խոչընդոտներն ու մարտահրավերները և մշակելու ու իրականացնելու արդյունավետ միջամտություններ:
4. Ուղեցույցի կիրառումը կօգնի գնահատելու «90-90-90» թիրախներին հասնելու առաջընթացը, նվազեցնելու ՄԻԱՎ վարակի նոր դեպքերը, պահպանելու մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցումը վերացրած երկրի կարգավիճակը, նվազեցնելու ՄԻԱՎ վարակով պայմանավորված մահացությունը [10]:

## II. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության ուղեցույցը մշակվել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետների կողմից ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. թիվ 1527-Ա հրամանով հաստատված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունների ազգային ուղեցույցի և գործնական աշխատանքի ձեռնարկի [1] հիման վրա, որը լրամշակվել, վերանայվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) և ՄԱԶԻԱՀ-ի ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողությանն առնչվող ժամանակակից առաջարկների հիման վրա: Ուղեցույցի մշակման աշխատանքային խմբում ներգրավվել են նաև մասնագետներ այլ բժշկական կազմակերպություններից: Օգտագործվել են «Cochrane library», «UpToDate», «MEDLINE», «National Guideline Clearinghouse», «PubMed» շտեմարանների արդի տվյալները: Օգտագործված աղբյուրներն ընտրվել են բանալի բառերի օգնությամբ իրականացված համակարգային որոնման հիման վրա: Կիրառվել են տեսակավորման հետևյալ չափանիշները՝ ուղեցույցերի ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն և ցանկացած խորհրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ: Ուսումնասիրվել են նաև ԱՀԿ-ի, ՄԱԶԻԱՀ-ի ոլորտին վերաբերող փաստաթղթեր, երկրում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում գործող իրավական նորմատիվային ակտեր և այլն: Տեղայնացման աշխատանքներն իրականացվել են «ADAPTE» մեթոդաբանությամբ: Ապահովվել է ուղեցույցի դրույթների վերաբերյալ հեղինակային խմբի բոլոր անդամների փոխհամաձայնությունը:
6. Տեղեկատվության որակը գնահատելիս և առաջարկների ուժգնությունը որոշելիս հիմք է ընդունվել առաջարկների ուսումնասիրման, մշակման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE):
7. Սույն ուղեցույցը կարող է վերանայվել պարբերաբար (հինգ տարին մեկ) և ըստ անհրաժեշտության ոլորտում նոր մտտեցումներ, առաջարկներ ի հայտ գալիս:

### **III. ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈՒԺԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՈՐԱԿԻ**

8. Սույն ուղեցույցում առաջարկների ուժգնությունը որոշելիս հիմք է ընդունվել առաջարկների ուսումնասիրման, մշակման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE): Առաջարկներն աստիճանակարգված են ըստ ուժգնության և ապացույցների որակի [11] և ներկայացված են հավելված 1-ում:
9. Ըստ ուժգնության՝ առաջարկները կարող են լինել՝
  - 1) ուժեղ - առաջարկից ակնկալվող ցանկալի արդյունքն ակնհայտորեն գերազանցում է անցանկալի ազդեցությունները,
  - 2) պայմանական - առաջարկից ակնկալվող ցանկալի արդյունքը հավանաբար գերազանցում է անցանկալի ազդեցությունները կամ մոտ է դրանց:
10. Ըստ ապացույցների որակի՝ առաջարկները կարող են լինել՝
  - 1) բարձր - խորին համոզվածություն, որ առաջարկից ակնկալվող իրական արդյունքը մոտ է ենթադրվողին,
  - 2) միջին - բավականաչափ համոզվածություն, որ առաջարկից ակնկալվող արդյունքը գնահատված է ճիշտ, սակայն այն կարող է զգալիորեն տարբերվել դրանից,
  - 3) ցածր - սահմանափակ համոզվածություն, որ առաջարկից ակնկալվող իրական արդյունքը գնահատված է ճիշտ, և այն կարող է էապես տարբերվել դրանից,
  - 4) շատ ցածր - ցածր համոզվածություն, որ առաջարկից ակնկալվող իրական արդյունքը գնահատված է ճիշտ, և հավանաբար այն էապես տարբերվում է դրանից:

### **IV. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

11. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության նպատակներն են՝
  - 1) ՄԻԱՎ վարակի դեպքի հայտնաբերում,
  - 2) բնակչության տարբեր խմբերում ՄԻԱՎ վարակի տարածվածության գնահատում,
  - 3) ՄԻԱՎ վարակի համաճարակի զարգացման միտումների ընթացիկ մոնիտորինգ,
  - 4) ՄԻԱՎ վարակի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող խմբերի հստակեցում,

- 5) կանխարգելիչ ծրագրերի համար առաջնահերթությունների բացահայտում և գնահատում,
- 6) ՄԻԱՎ-ի փոխանցման ոչսկի գործոնների գնահատում,
- 7) ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների փոփոխությունների միտումների մոնիտորինգ,
- 8) ՄԻԱՎ վարակի/ՁԻԱՀ-ի դեպքերի կանխատեսում,
- 9) կանխարգելիչ ծրագրերի պլանավորման, պահանջվող միջոցների հիմնավորման և անցկացվող կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ տվյալների ստացում [2,3,4]:

## **V. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՔԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

12. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության ուղղություններն են՝
  - 1) ՄԻԱՎ վարակի դեպքերի ընթացիկ համաճարակաբանական հսկողություն,
  - 2) ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ընտրանքային (կենսաբանական և վարքագծային) հսկողություն,
  - 3) բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի չափերի գնահատում,
  - 4) ՄԻԱՎ վարակով պացիենտների մահվան դեպքերի հսկողություն,
  - 5) ՄԻԱՎ/համակցված և զուգորդող հիվանդությունների հսկողություն,
  - 6) ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողություն,
  - 7) ՀՌՎ դեղերի տոքսիկության վերաբերյալ համաճարակաբանական հսկողություն,
  - 8) ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի հսկողություն,
  - 9) ՄԻԱՎ վարակի դեպքերի կանխատեսում:

## **VI. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԴԵՊԹԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՔԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

13. ՄԻԱՎ վարակի դեպքերի ընթացիկ համաճարակաբանական հսկողությունը ներառում է՝
  - 1) ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի դեպքերի հայտնաբերումն ու գրանցումը,
  - 2) դեպքի համաճարակաբանական վերլուծությունն՝ ըստ տարիքի, սեռի, փոխանցման ուղու, վարակման հավանական վայրի և ժամանակի, բնակչության տարբեր խմբերի, վարչական միավորների և այլն,
  - 3) դեպքի հաշվառումն ու հաշվետվությունների ներկայացումը՝ ըստ ընդունված կարգի [2,3,4]:



14. ՄԻԱՎ վարակի հայտնաբերմանն ուղղված հետազոտություններն իրականացվում են բժշկական կազմակերպություններում՝ անկախ կազմակերպատիրավական ձևից և գերատեսչական պատկանելությունից:
15. ՄԻԱՎ վարակն ախտորոշվում է ըստ ախտորոշման չափանիշների և ՄԻԱՎ վարակի դեպքի դասակարգման: ՄԻԱՎ վարակի դեպքի ստանդարտ սահմանումը [12,13,14,15] ներկայացված է հավելված 2-ում:
16. ՄԻԱՎ վարակ ախտորոշման առավելագույն հավաստիության համար, համաձայն ԱՀԿ-ի առաջարկությունների, պետք է կիրառվեն ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների ստանդարտացված ռազմավարություններ: ՄԻԱՎ վարակի ախտորոշման ռազմավարությունը նկարագրում է ՄԻԱՎ վարակ ախտորոշման նպատակով հետազոտությունների իրականացման հաջորդականությունը [11,14]:
17. Հաստատող հետազոտությամբ ՄԻԱՎ վարակի վերջնական լաբորատոր ախտորոշում կատարվում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող այլ լաբորատորիաներ իրականացնում են միայն ՄԻԱՎ-ի վերաբերյալ սկրինինգային հետազոտություններ [12]:
18. ՄԻԱՎ-ի վերաբերյալ սկրինինգային հետազոտությունների ռազմավարությունը [12,16] ներկայացված է հավելված 3-ում:
19. ՄԻԱՎ վարակի ախտորոշման համար (18 ամսականից մեծ երեխաների և մեծահասակների շրջանում) ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների ռազմավարությունը իրենից ներկայացնում է երեք, անհրաժեշտության դեպքում՝ չորս տարբեր շճաբանական թեստերի հաջորդականություն, որոնք չունեն ընդհանուր կեղծ ռեակտիվություն: Այդ ռազմավարությունը նախատեսում է նաև ՄԻԱՎ-ի նուկլեինաթթուների հայտնաբերմանն ուղղված թեստերի (ՄԻԱՎ-ի ԴՆԹ-ի հայտնաբերման հետազոտություն ՊՇՌ մեթոդով) կիրառում կողմնորոշիչ նպատակներով: ՄԻԱՎ վարակի վերջնական լաբորատոր ախտորոշումը կատարվում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում՝ ՄԻԱՎ-ի հաստատման երկրում միակ ռեֆերենս լաբորատորիայում: ՄԻԱՎ վարակի ախտորոշման համար (18 ամսականից մեծ երեխաների և մեծահասակների շրջանում) ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների ռազմավարությունը [12,16] ներկայացված է հավելված 4-ում:
20. **Մինչև 18 ամսական երեխաների մոտ ՄԻԱՎ վարակի ախտորոշման համար կատարվում է ՊՇՌ մեթոդով ՄԻԱՎ-ի ԴՆԹ-ի հայտնաբերմանն ուղղված հետազոտություն (ուժեղ առաջարկ, ապացույցների բարձր որակ) [12, 16]:** Հետազոտության շճաբանական մեթոդները կիրառելի չեն, քանի որ մինչև 18 ամսական երեխաների մոտ դրանց արդյունքում ստացվող դրական պատասխանը կարող է պայմանավորված լինել տրանսպլացենտար ճանապարհով երեխային անցած ՄԻԱՎ-ի նկատմամբ մայրական հակամարմիններով:

Մինչև 18 ամսական երեխաների մոտ շճաբանական հետազոտություն կատարվում է ՄԻԱՎ-ի հետ երեխայի հնարավոր շփումը գնահատելու համար: ՄԻԱՎ-ի վերաբերյալ պետք է հետազոտվեն ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված բոլոր երեխաները՝ համաձայն «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի [17]: Բուժաշխատողի նախաձեռնությամբ ՄԻԱՎ-ի վերաբերյալ պետք է հետազոտվեն ՄԻԱՎ-ի նկատմամբ անհայտ կարգավիճակով մայրերից ծնված, նաև ՄԻԱՎ վարակի հավանական ախտանշաններ ունեցող երեխաները: Առաջնակի հետազոտությունը կատարվում է շճաբանական թեստերով: Մինչև 18 ամսական երեխաների մոտ ՄԻԱՎ վարակի ախտորոշման համար հետազոտությունների ռազմավարությունը [12, 16] ներկայացված է հավելված 5-ում:

21. ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունների համար թեստ-հավաքածուներն ընտրվում են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի՝ ՄԻԱՎ-ի հաստատման լաբորատորիայի առաջարկների հիման վրա, որոնք տրվում են լաբորատորիայում թեստ-հավաքածուների մուտքային ստուգումից հետո, հաշվի առնելով նաև երկրում ՄԻԱՎ վարակի համաճարակի փուլը, թեստ-հավաքածուների սպեցիֆիկությունն ու զգայունությունը [1]:
22. ՄԻԱՎ վարակի արձանագրված յուրաքանչյուր դեպքի համար կատարվում է համաճարակաբանական հետազոտություն ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի բժիշկ-համաճարակաբանի կողմից, դեպքը ենթարկվում է վերլուծության՝ ըստ սահմանված չափանիշների [13,14]:
  - 1) Վերլուծություն՝ ըստ տարիքի, սեռի, բնակչության տարբեր խմբերի, վարչական միավորների, փոխանցման հավանական ուղիների:
  - 2) ՄԻԱՎ վարակի տարածման միտումների վերլուծություն՝ ըստ տարիքի, սեռի, բնակչության տարբեր խմբերի, վարչական միավորների, փոխանցման հավանական ուղիների:
  - 3) Գրաֆիկների և աղյուսակների միջոցով տվյալների վերլուծություն՝ ըստ տարիների, տարիքի, սեռի, բնակչության տարբեր խմբերի, վարչական միավորների:
  - 4) Քարտեզների միջոցով տվյալների վերլուծություն՝ ըստ վարչական միավորների և ընտրանքային տեղամասերի:
23. ՄԻԱՎ վարակի դեպքերը ենթակա են հաշվառման (գրանցման) ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում՝ դեպքերի գրանցման էլեկտրոնային բազայում: ՄԻԱՎ վարակի հաստատված դեպքերի վերաբերյալ ներկայացվում է ամսական հաշվետվություն՝ սահմանված կարգով:
  - 1) ՄԻԱՎ վարակի դեպքի հաշվառման տարրեր՝ տարիք, սեռ, վարչական միավոր, փոխանցման հավանական ուղի:

- 2) ՄԻԱՎ վարակի դեպքի հաշվետվության տարրեր՝ տարիք, սեռ, վարչական միավոր, փոխանցման հավանական ուղի:
24. ՄԻԱՎ վարակի դեպքերի հաշվառման և հաշվետվության համար կիրառվում են ուղեգրերի և հաշվետվությունների հետևյալ ձևերը.
- 1) Ուղեգիր արյան մեջ ՄԻԱՎ-ի նկատմամբ հակամարմիններ հայտնաբերելու համար. հենակետային լաբորատորիա ուղարկվող արյան փորձանմուշների ուղեկցող փաստաթուղթ (հավելված 6): Լրացվում է 2 օրինակից, ուղեգրող բժշկի կողմից, կնքվում ուղեգրող կազմակերպության կնիքով [12]:
  - 2) Ուղեգիր արյան մեջ ՄԻԱՎ-ի առկայությունը հաստատելու համար. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի՝ ՄԻԱՎ-ի հաստատման լաբորատորիա ուղարկվող ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական արյան փորձանմուշների ուղեկցող փաստաթուղթ (հավելված 7): Լրացվում է 1 օրինակից, ուղեգրող բժշկի կողմից, կնքվում ուղեգրող կազմակերպության կնիքով [12]:
  - 3) ՄԻԱՎ վարակի ախտորոշման մասին ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի՝ ՄԻԱՎ-ի հաստատման լաբորատորիայից ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժին ներկայացվող շտապ հաղորդագրություն (հավելված 8): Լրացվում է լաբորատորիայի վարիչի կողմից և ներկայացվում ՄԻԱՎ վարակի ախտորոշումից անմիջապես հետո [12]:
  - 4) ՄԻԱՎ վարակով պացիենտի համաճարակաբանական հետազոտման քարտ (հավելվածներ 9,10): Լրացվում է ՄԻԱՎ վարակ ախտորոշում ստացած յուրաքանչյուր պացիենտի համար ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժնի բժիշկ-համաճարակաբանի կողմից:
  - 5) ՄԻԱՎ վարակով պացիենտի հաշվառման քարտ (հավելված 11): Լրացվում է ՄԻԱՎ վարակ ախտորոշում ստացած յուրաքանչյուր պացիենտի համար ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժնի բժիշկ-համաճարակաբանի կողմից:
  - 6) ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի վերաբերյալ ամսական հաշվետվություն [18]: Ներկայացվում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն մինչև հաջորդ ամսվա հինգր՝ ըստ ձև 85-ի (հավելված 12):
  - 7) «Մարդու իմունային անբավարարության վիրուսի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների մասին» ձև 88 հաշվետվություն (հավելված 13): ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաները հետազոտությունների մասին հաշվետվություններ են ներկայացնում ՁԻԱՀ-ի ԿՀԿ, որն էլ ամփոփ հաշվետվություն է ներկայացնում ՀՀ ԱՆ [19]:

25. ՁԻԱՀ ախտորոշվում է հաստատված ՄԻԱՎ վարակ ունեցող մեծահասակների և երեխաների մոտ՝ կլինիկական և/կամ իմունաբանական չափանիշների հիման վրա: ՁԻԱՀ-ի դեպքի ստանդարտ սահմանումը ներկայացված է հավելված 14-ում: ՁԻԱՀ արձանագրվում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի բժշկական օգնության և սպասարկման բաժնում՝ կլինիկական և իմունաբանական չափանիշների հիման վրա [13,14,15], (հավելված 15):
26. ՁԻԱՀ-ի դեպքը ենթարկվում է վերլուծության՝ ըստ սահմանված չափանիշների:
- 1) Վերլուծություն՝ ըստ տարիքի, սեռի, բնակչության տարբեր խմբերի, վարչական միավորների, վարակման հավանական ուղիների:
  - 2) Գրաֆիկների և աղյուսակների միջոցով տվյալների վերլուծություն՝ ըստ տարիների, տարիքի, սեռի, բնակչության տարբեր խմբերի, վարչական միավորների:
  - 3) Քարտեզների միջոցով տվյալների վերլուծություն՝ ըստ վարչական միավորների [13]:
27. ՁԻԱՀ-ի դեպքերը ենթակա են հաշվառման (գրանցման) ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում՝ դեպքերի գրանցման էլեկտրոնային բազայում:
- 1) ՁԻԱՀ-ի հաշվառման տարրեր՝ տարիք, սեռ, բնակավայր, վարակման հավանական ուղի:
  - 2) ՁԻԱՀ-ի հաշվետվության տարրեր՝ տարիք, սեռ, բնակավայր, վարակման հավանական ուղի:
28. ՁԻԱՀ-ի ախտորոշման մասին ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի բժշկական օգնության և սպասարկման բաժնից ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժին ներկայացվող հաշվետվություն: Լրացվում է յուրաքանչյուր ամսվա համար բաժնի վարիչի կողմից և ներկայացվում մինչև հաջորդ ամսվա առաջին աշխատանքային օրվա վերջը:

## **VII. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

29. ՄԻԱՎ վարակի կլինիկահամաճարակաբանական առանձնահատկությունների պատճառով հնարավոր չէ միայն գրանցված դեպքերի հիման վրա դատել համաճարակի զարգացման միտումների մասին: ՄԻԱՎ-ի տարածվածության իրական մակարդակը բացահայտելու, համաճարակի զարգացման միտումները պարզելու համար պարբերաբար իրականացվում են կենսաբանական և վարքագծային հետազոտություններ [2,3,4,20]:
30. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական հետազոտությունների նպատակը բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածության գնահատումն է [2,3,4,20,21]:

31. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ վարքագծային հետազոտություններն անցկացվում են ՄԻԱՎ-ի տարածմանը նպաստող վարքագծային գործոնները բացահայտելու, ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը գնահատելու, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և կանխարգելման ծրագրերի ծածկույթը որոշելու, սեռավարակների ախտանշանների առկայությունը, հնարավոր խարանի և խտրական վերաբերմունքի դրսևորումները պարզելու նպատակով [2,3,4,20,21]:
32. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունները նաև հնարավորություն են տալիս գնահատելու իրականացված կանխարգելիչ միջոցառումների արդյունավետությունը, մշակելու և ներդնելու արդյունավետ կանխարգելիչ ծրագրեր [2,3,4,20,21]:
33. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններն անցկացվում են երկու տարին մեկ: Նախապես սահմանվում են հետազոտությունների անցկացման աշխարհագրական տարածքները, ընտրանքային խմբերը, ընտրանքային տեղամասերը, հաշվարկվում են ընտրանքի չափերը: Սովորաբար կենսաբանական և վարքագծային հետազոտությունների ժամանակ նախատեսվում է դաշտային աշխատանքներն իրականացնել 8-10 շաբաթվա ընթացքում: Սակայն դժվար հասանելի խմբերի համար այդ ժամանակահատվածը կարող է երկարացվել մինչև ընտրանքի անհրաժեշտ չափի ապահովումը [2,3,4,20,21]:
34. Ընդհանուր բնակչության շրջանում ՄԻԱՎ վարակի համաճարակաբանական իրավիճակը գնահատելու նպատակով անցկացվում է մոնիտորինգ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հղիների շրջանում կատարվող հետազոտությունների և դոնորական արյան սկրինինգի նկատմամբ: Արյան դոնորների շրջանում կենսաբանական հետազոտություններն իրականացվում են պարտադիր կարգով, մշտապես [2,3,4,17,21]: Հղիների շրջանում կենսաբանական հետազոտություններն իրականացվում են նախաձեռնության խնամք տրամադրող բժշկական կազմակերպություններում բուժաշխատողների նախաձեռնությամբ իրականացվող ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության շրջանակում, մշտապես [2,3,4,22,23,24]:
35. Անհատի առողջության և հանրային առողջապահության համար ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության համընդհանուր հասանելիության առավելությունները հաշվի առնելով, համաձայն ԱՀԿ-ի և ՄԱԶԻԱՀ-ի առաջարկությունների՝ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ընտրանքային համաճարակաբանական հսկողությունը պետք է իրականացվի հետազոտությանը մասնակցած բոլոր անձանց՝ ՄԻԱՎ-ի նկատմամբ կարգավիճակն իմանալու

հնարավորության ընձեռումով՝ հետագայում կանխարգելման, բուժման և խնամքի ծառայություններին նրանց կապակցման նպատակով [12,16,25]:

36. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ընտրանքային համաճարակաբանական հսկողության շրջանակում պետք է կիրառվի ՄԻԱՎ-ի վերաբերյալ կապակցված հետազոտության մեթոդը, որի դեպքում հետազոտության մասնակիցները պետք է ստանան նախաթեստային և հետթեստային խորհրդատվություն, ինչպես նաև ստանան իրենց հետազոտության արդյունքը և իմանան ՄԻԱՎ-ի նկատմամբ իրենց կարգավիճակը [12,16,25]:
37. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության ռազմավարության տեսակը և կիրառվող ալգորիթմն ազդում են կենսաբանական հսկողության արդյունքների վրա: Համաձայն ԱՀԿ-ի առաջարկությունների՝ ընտրանքային համաճարակաբանական հսկողության ընթացքում պետք է կիրառվեն ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության նույն ռազմավարություններն ու ալգորիթմները, որոնք կիրառվում են ՄԻԱՎ վարակի ախտորոշման համար [12,16]:
38. ՄԻԱՎ վարակի նկատմամբ համաճարակաբանական հսկողությունը պետք է իրականացվի ԱՎԵԽ-ների շրջանում, որոնք ընտրվում են՝ ըստ համաճարակի զարգացման փուլերի [2,3,20,21]:
39. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական հսկողությունն ԱՎԵԽ-երի շրջանում իրականացվում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից, զուգակցվում է վիրուսային հեպատիտների և սեռավարակների վերաբերյալ հետազոտություններով [2,3,20, 21]:
40. Հղիների շրջանում ՄԻԱՎ վարակի համաճարակաբանական հսկողության նպատակով օգտագործվում են մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման ծրագրային տվյալները [2,3,22,23,24]:
41. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններն անցկացվում են Երևանում և ՀՀ 2 մարզերում՝ Շիրակում և Լոռիում: Այլ աշխարհագրական վայրեր կարող են ավելացվել՝ հաշվի առնելով ընտրանքային խմբերի չափերը և համաճարակաբանական ցուցումները:
42. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ անցկացվում են բնակչության հետևյալ խմբերում (ընտրանքային խմբեր)՝
  - 1) թմրամիջոցների ներարկային օգտագործողներ (ԹՆՕ)՝ վերջին երեք ամսվա ընթացքում ներարկային ճանապարհով թմրամիջոցներ օգտագործած մարդիկ,
  - 2) կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք (ԿՍԿ)՝ վերջին երեք ամսվա ընթացքում վճարովի սեռական ծառայություններ տրամադրած կանայք,

- 3) տղամարդկանց հետ սեռական կապեր ունեցող տղամարդիկ (SUS)՝ վերջին 12 ամիսների ընթացքում տղամարդ զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունեցած տղամարդիկ,
  - 4) միգրանտներ՝ վերջին երեք տարվա ընթացքում ՀՀ-ից երեք ամսից ավել բացակայած աշխատանքային միգրանտներ:
43. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ միայն վարքագծային հետազոտություն անցկացվում է բնակչության հետևյալ խմբերում՝
- 1) երիտասարդներ՝ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 15-24 տարեկան սովորողներ,
  - 2) քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ՝ քննչական կալանքի տակ գտնվողներ և ազատազրկման դատապարտվածներ:
44. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ միայն կենսաբանական հետազոտություններ անցկացվում են բնակչության հետևյալ խմբերում՝
- 1) հղիներ,
  - 2) արյան դոնորներ:
45. Ընտրանքային խմբերը կարող են փոփոխվել՝ կախված համաճարակաբանական իրավիճակից, բնակչության տարբեր խմբերում ՄԻԱՎ-ի տարածվածության փոփոխությունից [2,3,20,21]:
46. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների ընտրանքային տեղամասերն ընտրվում են ընտրանքի մեթոդին և համաճարակաբանական ցուցումներին համապատասխան [26]:
47. Կախված հետազոտության նպատակից՝ ընտրանքի չափը հաշվարկվում է տարբեր մեթոդներով [27,28,32]:
- 1) Ընտրանքի չափի հաշվարկում ժամանակի ընթացքում փոփոխությունների գնահատման համար:

Հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$n = D \frac{\left[ Z_{1-\alpha} \sqrt{2\bar{P}(1-\bar{P})} + Z_{1-\beta} \sqrt{P_1(1-P_1) + P_2(1-P_2)} \right]^2}{(P_2 - P_1)^2}$$

որտեղ՝

n - ընտրանքի չափն է,

D - դիզայն-էֆեկտ (ճշգրտման գործակից), տատանվում է 1-ից 2-ի սահմաններում.

ՄՄՁԸ-ի դեպքում խորհուրդ է տրվում կիրառել D=1,25, կլաստերային և ժամանակատեղանքային ընտրանքի դեպքում՝ D=2 (որքան մեծ է D-ն, այնքան մեծ է անհրաժեշտ ընտրանքի չափը),

Z1-a - Z - հաստատուն մեծություն է, կախված է հետազոտության վիճակագրական վստահության ցանկալի մակարդակից, սովորաբար կազմում է 1,96՝ 95% վստահության համար,

Z1-b - հաստատուն մեծություն է, կախված է հետազոտության վիճակագրական հզորության ցանկալի մակարդակից, սովորաբար կազմում է 0,83 80% հզորության համար,

P1 - առաջին հետազոտության թիրախային ցուցանիշն է,

P2 - երկրորդ հետազոտության համար պլանավորված թիրախային ցուցանիշն է,

$P = (P1+P2)/2$ :

2) Ընտրանքի չափի հաշվարկում նպատակային խմբի հայտնի չափի դեպքում:

Հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$n = \frac{1}{\Delta^2 + \frac{1}{N}}$$

որտեղ՝

n - ընտրանքի չափն է,

N - նպատակային խմբի չափն է,

Δ - ընտրանքի սխալն է:

48. Ընտրանքի ձևավորման համար անհրաժեշտ տեղեկատվության առկայության դեպքում կիրառվում են ընտրանքի ձևավորման հավանական մեթոդները, իսկ այդպիսի տեղեկատվության բացակայության և/կամ դժվար հասանելի խմբերի հետ աշխատանքների դեպքում՝ ոչ հավանական մեթոդները:

49. Ընտրանքի ձևավորման հավանական մեթոդներն են [21,26,30,31]՝

1) Կանոնավոր կամ հասարակ պատահական ընտրանքը նպատակահարմար է կիրառել, երբ հայտնի են հետազոտվող խմբի բոլոր անդամները: Խմբի բոլոր անդամներն ունեն ընտրանքի մեջ ընդգրկվելու հավասար հավանականություն: Ընտրանքը ձևավորելու համար նախ ընտրվում է պատահական ելակետ, ապա ընդհանուր հետազոտվող խմբից (N) ընտրվում է յուրաքանչյուր x-րդը: Ընտրանքի x միջակայքը որոշվում է ընդհանուր հետազոտվող խմբի և ընտրանքի չափի (n) հարաբերությամբ՝ կլորացնելով այն մինչև մոտակա ամբողջ թիվը:

$$x = \frac{N}{n}$$

2) Երկաստիճան կլաստերային ընտրանքը կիրառվում է, երբ հայտնի չեն հետազոտվող խմբի բոլոր անդամները: Հասարակ պատահական ընտրությամբ ընտրվում են կլաստերներ, որոնք ծառայում են որպես



ընտրանքի առաջնային միավոր: Կլաստերներում հետազոտվում են ընտրանքային խմբի բոլոր ներկայացուցիչները (որոշ մասը կամ սահմանված թվով անձինք): Երկաստիճան կլաստերային ընտրանքի ձևավորման փուլերն են՝

ա. I փուլ - կլաստերների պատահական ընտրություն,

բ. II փուլ - ընտրված կլաստերներում սահմանված թվով անձանց պատահական ընտրություն [26,31,32,33]:

- 3) Մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանքը (ՄՄՁԸ) շղթայական ընտրանքի տեսակ է բնակչության դժվար հասանելի (թաքնված) խմբերին հասնելու համար: ՄՄՁԸ-ի հիմքում ընկած է Մարկովի երկար շղթաների տեսությունը, որի համաձայն՝ վերջնական ընտրանքը կախված չէ ընտրված «սերմերից» և նմանատիպ է բնակչության այն խմբերում, որտեղից կատարվում է հավաքագրումը: Այս մեթոդի կիրառումը նվազեցնում է սխալները, որոնք սովորաբար հանդիպում են շղթայական ուղղորդման այլ մեթոդներում՝ կիրառելով «հավասարը հավասարին» ընդգրկման սահմանափակ համակարգ: Մասնակիցները կարող են ընդգրկել մինչև երեք մասնակից՝ նվազեցնելով այն մարդկանց գերներկայացվածությունը, որոնք ունեն մեծ ցանցեր: Սա հանգեցնում է մասնակիցների ընդգրկման երկար շղթաների, հետևաբար նվազեցնում է ոչ պատահականորեն ընտրված սկզբնական մասնակիցների սխալը և հնարավորություն տալիս ավելի խորը ներթափանցելու թիրախային խմբի ցանց: Բացի այդ, ՄՄՁԸ-ն ենթադրում է ընտրանք ցանցից, ոչ թե խմբից: Վերլուծությունը ներառում է տվյալների կշռում ցանցի չափով այնպես, որ նրանք, ովքեր ունեն ավելի մեծ ցանցեր, ստանան ավելի քիչ կշիռ, և նրանք, ովքեր ունեն ավելի փոքր ցանց, ստանան ավելի մեծ կշիռ: Յուրաքանչյուր մասնակից կպատասխանի իր սոցիալական ցանցի չափի վերաբերյալ հարցերին, որոնք ներառում են ընդգրկման բոլոր չափանիշները: Նախքան բուն հետազոտությունն սկսելը կատարվում է նախնական հետազոտություն, որի ընթացքում իրականացվում են ֆոկուս խմբային քննարկումներ, խորացված հարցազրույցներ նպատակային խմբի ներկայացուցիչների և նրանց հետ աշխատողների շրջանում, կատարվում է քարտեզավորում: Նախնական հետազոտությունը կօգնի պարզելու, թե որքանով է ՄՄՁԸ-ի մեթոդը կիրառելի բնակչության տվյալ խմբի համար (այսինքն՝ խումբն ունի՞ կազմավորված սոցիալական ցանց, թե՞ ոչ), սահմանելու «սերմերի» ընտրության չափանիշները, խրախուսման տեսակը, հետազոտության աշխարհագրական ծածկույթը: Նախնական հետազոտության ժամանակ նաև մշակվում են մասնակիցներին տրվելիք կտրոնները: Հետազոտությունն սկսվում է ոչ պատահական մեթոդով ընտրված «սերմերի»

ներգրավումից, որոնց հավաքագրում է անձնակազմը: Ընտրված «սերմերը» պետք է բավարարեն որոշ չափանիշների՝ լինեն լավ կապված իրենց ցանցի մյուս անդամների հետ, ընդունված լինեն նրանց կողմից և լիովին հասկանան հետազոտության նպատակը: Ընտրված «սերմերը» հավաքագրում են իրենց հավասարակիցներին, վերջիններս էլ՝ իրենց այլ հավասարակիցների և այսպես շարունակ: Հավասարակիցները պետք է համապատասխանեն նախապես ընդունված չափանիշներին (ճանաչեն միմյանց, բնակվեն նույն բնակավայրում և այլն): Բոլոր մասնակիցներին, ներառյալ «սերմերը», տրվում է երեքական կտրոն՝ նոր մասնակիցներ հավաքագրելու համար: Կտրոնները համարակալվում են: Դրանք բաղկացած են երկու մասից՝ «ուղեգրման կտրոն», որով նոր հավաքագրված անձը մասնակցում է հետազոտությանը, և «վճարման կտրոն», որով նա ներկայանում է՝ ստանալու իր խրախուսումը: Խրախուսում ստանում են հետազոտություն անցած բոլոր մասնակիցները: Նախատեսվում է նաև լրացուցիչ խրախուսում յուրաքանչյուր նոր հավաքագրվածի համար: Բոլոր մասնակիցների հետ անցկացվում է հարցազրույց նախապես մշակված հարցաշարի համաձայն, որում, բացի ստանդարտ հարցերից (ժողովրդագրական տվյալներին, գիտելիքին և վարքագծին վերաբերող հարցեր), ՄՄՁԸ-ի ժամանակ ներառվում են նաև լրացուցիչ հարցեր սոցիալական ցանցի, հավաքագրողների և կտրոններն ընդունելուց հրաժարվածների վերաբերյալ: Բոլոր տվյալները և լրացվող ձևերը (հավելված 16-29) պետք է կապակցված լինեն կտրոնների համարներին: ՄՄՁԸ-ից ստացված տվյալների վերլուծության համար օգտագործվում է հատուկ համակարգչային ծրագիր՝ RDSAT [26,32,33,34]:

- 4) Ժամանակատեղանքային ընտրանքը երկաստիճան կլաստերային ընտրանքի տեսակ է: Հնարավորություն է տալիս մեծացնելու բնակչության դժվար հասանելի խմբերի ընտրանքի ներկայացուցչականությունը: Պահանջվում են ժամանակացույց և ընտրանքային տեղամասերի ցանկ, նաև տվյալ տեղամասում նշված ժամանակահատվածում հետազոտման ենթակա խմբի թվաքանակ: Ընտրանքը ձևավորվում է տվյալ կետում տվյալ պահին գտնվող հետազոտվող խմբի բոլոր կամ պատահական ընտրված սահմանված թվով ներկայացուցիչների միջոցով [21,26,31]:
- 5) Ընտրանքի ձևավորման ոչ հավանական մեթոդ է նպատակային ընտրանքի մեթոդը (ձնակույտի մեթոդ): Այն կիրառվում է, երբ անհրաժեշտ է հետազոտել բնակչության դժվար հասանելի խմբերը կամ որևէ խմբի թաքնված հատվածը: Ընտրանքի ձևավորման սկզբունքն այն է, որ առանցքային իրազեկիչները նպատակային խմբի անդամներին առաջարկում են մասնակցել

հետազոտությանը, հետազոտության նոր մասնակիցները կրկնում են նույն գործընթացը մինչև ընտրանքի անհրաժեշտ չափի ձևավորումը [21,26,31]:

50. Ընտրանքի ձևավորման մեթոդները՝ ըստ բնակչության տարբեր խմբերի ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Խումբ	Նախընտրելի մեթոդ	Այլընտրանքային մեթոդ
ԹՆՕ-ներ	<ul style="list-style-type: none"> <li>Մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանք</li> <li>Ժամանակատեղանքային ընտրանք</li> </ul>	Նպատակային ընտրանք
ԿՍԿ-ներ	<ul style="list-style-type: none"> <li>Մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանք</li> <li>Ժամանակատեղանքային ընտրանք</li> </ul>	Նպատակային ընտրանք
SUS-ներ	<ul style="list-style-type: none"> <li>Մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանք</li> <li>Ժամանակատեղանքային ընտրանք</li> </ul>	Նպատակային ընտրանք
Միգրանտներ	<ul style="list-style-type: none"> <li>Բազմափուլ կլաստերային ընտրանք</li> <li>Մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանք</li> <li>Ժամանակատեղանքային ընտրանք</li> </ul>	Նպատակային ընտրանք
Երիտասարդներ	<ul style="list-style-type: none"> <li>Երկաստիճան կլաստերային ընտրանք</li> <li>Ժամանակատեղանքային ընտրանք</li> </ul>	Նպատակային ընտրանք
ՔԿՀ-ներում գտնվողներ	<ul style="list-style-type: none"> <li>Կանոնավոր կամ հասարակ պատահական ընտրանքի մեթոդ</li> </ul>	Երկաստիճան կլաստերային ընտրանք

- 1) ՄԻԱՎ-ի վերաբերյալ կենսաբանական հսկողության նպատակով կիրառվում են թեստավորման կամավոր անանուն, կամավոր գաղտնի մեթոդները, և անցկացվում է «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքով սահմանված անձանց պարտադիր հետազոտություն [17]:
- 2) Կամավոր անանուն մեթոդով թեստավորման ժամանակ հետազոտվողն արյուն է հանձնում կամավոր համաձայնություն տալուց հետո: Արյան փորձանմուշը կոդավորվում է, և անձը բացահայտող բոլոր տվյալները

հետազոտվում են: Հետազոտվողն իմանում է իր կողմը և ցանկության դեպքում կարող է իմանալ թեստավորման պատասխանը:

- 3) Կամավոր գաղտնի մեթոդով թեստավորման ժամանակ հետազոտվողն արյուն է հանձնում կամավոր համաձայնություն տալուց հետո: Հետազոտվողի անձը և թեստի արդյունքները հայտնի են դառնում առողջապահության բնագավառի սահմանափակ թվով աշխատողների:
- 4) ՄԻԱՎ-ի վերաբերյալ պարտադիր հետազոտման ենթակա են արյան, կենսաբանական հեղուկների, հյուսվածքների և օրգանների դոնորները, ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված երեխաները համաձայն «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի [17]:

51. Վարքագծային հետազոտություններն իրականացվում են հարցման կամ խորացված հարցազրույցի մեթոդներով: Որպես հետազոտության միջոց՝ հարցման ժամանակ օգտագործվում է հարցաթերթ, խորացված հարցազրույցի ժամանակ՝ հարցազրույցի պլան: Հարցաթերթերը (հավելված 30-36) պետք է պարունակեն հարցեր, որոնք հնարավորություն կտան բացահայտելու ՄԻԱՎ-ի տարածմանը նպաստող վարքագծային գործոնները, գնահատելու ռիսկային վարքագծի առկայությունն ու դրա դրսևորման աստիճանը, նաև գնահատելու ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը [21,31]:

52. ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունների համար արյան փորձանմուշները վերցվում են ընտրանքային տեղամասերում: Օգտագործվում է նմուշների հաշվառման կտրոնային ձևը: Կտրոններում կոդավորվում են սեռը, տարիքը, տարածքը, հետազոտման խումբը: Փորձանմուշները ՄԻԱՎ-ի վերաբերյալ կարող են հետազոտվել տեղում կամ հավաքագրվել և տեղափոխվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիա: ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների որակի հսկողությունն իրականացնում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն: ՄԻԱՎ-ի նկատմամբ շճադրական բոլոր նմուշները ենթարկվում են կրկնակի հետազոտման՝ կեղծ դրական պատասխանների հավանականությունը նվազագույնի հասցնելու նպատակով:

53. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների տվյալները ենթարկվում են վիճակագրական մշակման և վերլուծվում են քանակական վիճակագրական մեթոդներով՝ հաշվի առնելով հավաստիության ցուցանիշները: Տվյալների մշակման և վերլուծման ժամանակ օգտագործվում են «SPSS», «RDSAT», «Stata» համակարգչային ծրագրերը: Վերլուծության ժամանակ հաշվի են առնվում սոցիալ-ժողովրդագրական տվյալները և կենսաբանական ցուցանիշները:

- 1) Սոցիալ-ժողովրդագրական տվյալներ

- ա. Սեռ
- բ. Տարիք
- գ. Կրթություն
- դ. Ընտանեկան դրություն

2) Կենսաբանական ցուցանիշներ

- ա. ՄԻԱՎ-ի տարածվածությունը ընտրանքային խմբերում
- բ. Սեռավարակների տարածվածությունը ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների շրջանում
- գ. Վիրուսային հեպատիտ Բ-ի տարածվածությունը ՏՍՏ-ների շրջանում
- դ. Վիրուսային հեպատիտ Ց-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում

54. Հետազոտությունների կազմակերպման և իրականացման գործընթացում ներգրավված անձնակազմը պետք է անցնի համապատասխան վարժանք և հրահանգավորում:

55. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունների համար պատասխանատուն ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն է, որը կազմակերպում է այդ հետազոտությունների շրջանակում դաշտային աշխատանքները, իրականացնում է հետազոտությունների մեթոդական ղեկավարումը, վերլուծությունը և վերահսկումը:

56. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտության արդյունքները ներկայացվում են կենսաբանական և վարքագծային հետազոտությունների վերաբերյալ հաշվետվությամբ, որը տրամադրվում է շահագրգիռ պետական կառավարման մարմիններին, պետական, ոչ պետական և միջազգային կազմակերպություններին:

### **VIII. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԻ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԽՄԲԵՐԻ ՉԱՓԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

57. Բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի (ԹՆՕ-ներ, ԿՍԿ-ներ, ՏՍՏ-ներ) չափերի գնահատումը կատարվում է արդյունավետ կանխարգելիչ ծրագրերի մշակման, պլանավորման և ղեկավարման համար երկու տարին մեկ անգամ: Դրա համար իրականացվում են հետազոտություններ Երևանում և ընտրված քաղաքներում, որոնց հիման վրա հաշվարկվում են առավել վտանգի ենթարկվող խմբերի չափերը [2,3,29]:

58. Ընտրանքային խմբերի չափերի գնահատման համար կիրառվում են ներքոնշյալ մեթոդները՝

- 1) փորձագիտական գնահատման մեթոդ (Դելֆիի մեթոդ),
- 2) գործակիցների մեթոդ,
- 3) անվանական մեթոդ,

- 4) կրկնակի ընդգրկման մեթոդ,
  - 5) սոցիալական ցանցերի միջոցով գնահատման մեթոդ
  - 6) բազմության իմաստության մեթոդ:
59. Հետազոտության ժամանակ անհրաժեշտ է կիրառել առնվազն երկու մեթոդ [29]:
  60. Արդյունքները պետք է ներկայացվեն և համաձայնեցվեն ոլորտի հիմնական գործընկերների մասնակցությամբ ազգային համաձայնության խորհրդակցության ընթացքում:
  61. Կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքում ստացվում են տվյալներ, որոնք անհրաժեշտ են խմբերի չափերի գնահատման համար՝ օգտագործելով «ծառայության» և «հատուկ առարկայի» գործակիցների մեթոդները: «Ծառայության» գործակիցը հաշվարկվում է առողջապահական ծառայություններ տրամադրող կազմակերպություններից ստացված ծրագրային տվյալների և հետազոտությանը նախորդած 6 ամիսների ընթացքում դրանցից հետազոտության մասնակիցների օգտվելու մասին հարցման տվյալների հիման վրա: «Հատուկ առարկայի» գործակցի դեպքում համապատասխան խմբերին աուբրիչ աշխատողների կողմից մինչ հետազոտությունն սկսելը բաժանվում են որոշակի հատուկ առարկաներ: Գործակիցները հաշվարկվում են ծառայություններից ստացված տվյալների և/կամ բաժանված առարկաների թվի համընկնումների և հետազոտության մասնակիցների մասնաբաժնի հիման վրա, որոնք կնշեն, որ ստացել են ծառայությունը և/կամ առարկան [29]:
  62. Սոցիալական ցանցերի միջոցով խմբերի չափերի գնահատման մեթոդն օգտագործում է ՄՄՁԸ-ի մեթոդով հետազոտության ժամանակ յուրաքանչյուր մասնակցի սոցիալական ցանցի վերաբերյալ հավաքագրված տվյալները՝ ենթադրելով, որ ցանցի հաջորդական ալիքներով բաշխումը արտացոլում է խմբի չափը: Գնահատումներ կատարելիս օգտագործվում է Բայեզիան մեթոդը (այսինքն՝ անհայտ քանակների հավանականությունը հաշվարկվում է՝ կապելով դրանց հայտնի քանակների հետ)՝ հիմնվելով խմբի չափի մասին ենթադրության կամ դրա վերաբերյալ նախորդ տվյալների վրա: Բայեզիան մեթոդը նաև թույլ է տալիս հաշվարկել խմբի չափի հավանական սահմանները [29, 34]:
  63. Բազմության իմաստության մեթոդը հիմնված է ենթադրության վրա, որ հիմնական խմբերի բավականաչափ ներկայացուցիչների պատասխանները հնարավորություն կտան գնահատելու խմբի չափերը: Հետազոտության մասնակից խմբերի ներկայացուցիչներին տրվում են հարցեր իրենց խմբի մոտավոր չափերի մասին և պատասխանների հիման վրա հաշվարկվում են նշված խմբերի նվազագույն և առավելագույն չափերը, մեդիանան [29, 34]:
  64. Գործակիցների մեթոդով խմբի չափը գնահատելու համար անհրաժեշտ է երկու մեծություն՝

- 1) խմբի ներկայացուցիչների թիվը, որոնք ստացել են առողջապահական ծառայություններ = n,
  - 2) խմբի ներկայացուցիչների մասնաբաժինը, որոնք հետազոտության ժամանակ նշել են այդպիսի ծառայություններ ստանալու մասին = p:
- Խմբի չափը կարող է գնահատվել՝ օգտագործելով հետևյալ հավասարումը.

$$PSE_{(multiplier)} = e = \frac{n}{p}$$

Հատուկ առարկաների հաշվարկը կատարվում է վերևում նկարագրվածի պես, բայց տվյալների աղբյուրները տարբեր են [29]:

65. Յուրաքանչյուր խմբի հարցաշարերում կան որոշակի հարցեր, որոնց պատասխանները օգտագործվում են խմբի չափի գնահատման համար:
66. Վերոնշյալ մեթոդներով խմբերի չափերի գնահատումներն ստանալուց հետո դրանք անհրաժեշտ է ներկայացնել վավերացման աշխատանքային հանդիպման ժամանակ, որին մասնակցում են պետական ոլորտի, ՀԿ-ների, հիմնական խմբերի ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ կողմեր: Հանդիպումը կազմակերպվում է՝
  - 1) հետազոտության յուրաքանչյուր տեղամասում յուրաքանչյուր խմբի չափի վերջնական գնահատման շուրջ համաձայնության գալու նպատակով,
  - 2) ստացված տվյալները մարզային և ազգային մակարդակներով էքստրապոլյացիայի ենթարկելու նպատակով:
67. Վերոնշյալ առաջին քայլի համար մասնակիցները բաժանվում են խմբերի՝ յուրաքանչյուրը ներկայացնելով քաղաքներից մեկը: Յուրաքանչյուր խումբ գնահատում է գործակիցների մեթոդով ստացված արդյունքները՝ հաշվի առնելով տվյալ մեթոդին բնորոշ շեղումները (սխալը): Տվյալները մուտքագրվում են աղյուսակի մեջ՝ հաշվարկների գերա- և թերագնահատումների հիման վրա ուղղելու նպատակով: Այնուհետև խմբերը պետք է գան համաձայնության յուրաքանչյուր քաղաքում յուրաքանչյուր խմբի համար առավել նպատակահարմար մեթոդի շուրջ՝ հիմնվելով իրենց գիտելիքների և փորձի վրա: Խմբերի կողմից համաձայնեցված տարբերակը ներկայացվում է հանդիպման մասնակիցներին վերջնական համաձայնության նպատակով:
68. Ազգային մակարդակով խմբերի չափերի գնահատման հաջորդ քայլը բոլոր քաղաքներում/մարզերում խմբերի խտության աստիճանների ձևավորումն է: Ձևավորվում են խմբեր, որոնք ներկայացնում են հիմնական խմբերից յուրաքանչյուրի խտության աստիճանների (բարձր, միջին և ցածր) ձևավորման չափանիշները: Չափանիշները կարող են ներառել արդյունաբերության և/կամ առևտրի զարգացումը, բնակչության շարժունությունը, հանգստի և/կամ տուրիզմի զարգացումը, ուսումնական հաստատությունների և/կամ ռազմաբազաների

առկայությունը, սահմանամերձ գոտում գտնվելը: Երևանը, Գյումրին և Վանաձորը կարող են դիտարկվել որպես խտության բարձր աստիճանով քաղաքներ: Այս գործընթացի ժամանակ յուրաքանչյուր խումբ քարտեզի վրա համապատասխան գույնով նշում է հիմնական խմբերի խտության աստիճանները (բարձր խտություն՝ կարմիր, միջին խտություն՝ կապույտ, ցածր խտություն կամ գոյություն չունի՝ սպիտակ) և այդ վայրերում մեծահասակ բնակչության մասնաբաժինը: Օրինակ՝ քաղաքներ բարձր խտությամբ (2,5%), միջին խտությամբ (0,8%) և ցածր (0,1%) խտությամբ: Քարտեզները ներկվում են աշխատանքային խմբերի կողմից առաջնային գիտելիքների և փորձի, ինչպես նաև երկրորդային աղբյուրների հիման վրա: Լրացված քարտեզները ներկայացվում են բոլոր մասնակիցներին վերջնական փոփոխությունների և համաձայնության համար:

69. Աշխատանքային հանդիպումից հետո համաձայնեցված վերջնական տեղեկատվությունը համակցվում է երկրորդային գրականության ուսումնասիրությանը՝ ստանալու վերջնական տվյալներ հիմնական խմբերի բարձր, միջին և ցածր տարածվածությունը ներկայացնելու համար: Այդ տվյալները հաշվարկվում են ՀՀ-ում անցկացված վերջին մարդահամարի արդյունքների հիման վրա՝ յուրաքանչյուր քաղաքի բնակչության թիվը բաժանելով տվյալ քաղաքի համար գնահատված յուրաքանչյուր խմբի թվի վրա: Այնուհետև ստացված մասնաբաժինները բազմապատկվում են համապատասխան խմբի չափով Հայաստանի բոլոր քաղաքներում: Այդ թվերը գումարվում են, և ստացվում է Հայաստանում յուրաքանչյուր խմբի վերջնական չափը:

## **IX. ԷԹԻԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

70. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունների ժամանակ անհրաժեշտ է պահպանել մարդկանց հետ աշխատանքի ընդունված էթիկական երեք սկզբունքները՝ հարգալից վերաբերմունք մարդկանց նկատմամբ, գործունեություն ի բարօրություն մարդկանց, արդարության ապահովում [25,35]:
71. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողություն իրականացնելիս հարկավոր է պահպանել որոշ էթիկական նորմեր, որոնց թվում են տեղեկացված համաձայնության ստացումը, գաղտնիության ապահովումը, զուգընկերների տեղեկացումը, խրախուսումները հետազոտությանը մասնակցելու համար: Նաև պետք է հաշվի առնել հետազոտությանը մասնակցելու հնարավոր օգուտներն ու վտանգները մասնակիցների համար [25,35]:



**X. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

72. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքների հավաստիության ապահովումը ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության տրամադրման ԱՀԿ-ի կարևոր ղեկավարող սկզբունքներից է [12,16]:
73. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող լաբորատորիաներում պետք է իրականացվի որակի հսկողություն 2 ուղղությամբ՝ ներլաբորատոր որակի հսկողություն (այսուհետ՝ ՆԼՈՀ) և որակի արտաքին հսկողություն (այսուհետ՝ ՈԱՀ) [12,16]:
74. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի՝ ՄԻԱՎ-ի հաստատման ռեֆերենս լաբորատորիան իրականացնում է ընդունվող/մատակարարված թեստերի որակի մուտքային հսկողություն:
75. Թեստերի որակի մուտքային հսկողությունը ենթադրում է ձեռք բերված նոր թեստերի նախնական ստուգում՝ տեխնիկական բնութագրերին դրանց համապատասխանության, պահման և տեղափոխման ջերմային ռեժիմների գնահատում և ընտրանքային ստուգիչ հետազոտության իրականացում:
76. ՆԼՈՀ-ի գործընթացը ներառում է ամենօրյա նախահետազոտական, հետազոտության և հետհետազոտական փուլերի ճշգրիտ իրականացում և հսկողություն [12,16]:
77. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի՝ ՄԻԱՎ-ի հաստատման լաբորատորիան՝ որպես ռեֆերենս լաբորատորիա, իրականացնում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող լաբորատորիաների որակի արտաքին հսկողություն:
78. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող բոլոր կազմակերպություններում պետք է իրականացվի ՈԱՀ [12,16]:
79. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող բոլոր բժշկական և այլ կազմակերպությունները պետք է ունենան ՈԱՀ-ի համակարգում լաբորատորիայի մասնակցությունը հավաստող և որակի համապատասխանության մասին վկայող փաստաթղթեր (հավաստագրեր, վկայականներ):
80. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող լաբորատորիաներում հետազոտությունների արդյունքների հավաստիության բարձրացման, նախահետազոտական, հետազոտական և հետհետազոտական փուլերում սխալների նվազեցման նպատակով անհրաժեշտ է մշակել գործողությունների ստանդարտ ընթացակարգեր: Գործողությունների ստանդարտ ընթացակարգեր պետք է ունենան նաև ՄԻԱՎ-ի վերաբերյալ ինքնաթեստավորման ծրագրերը [12,16]:
81. ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունների որակի նկատմամբ հսկողությունն իրականացվում է երկու եղանակով՝

- 1) առաջին եղանակ. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող ցանկացած լաբորատորիայում կատարված հետազոտությունների արդյունքների հաստատում պատահական ձևով ընտրված փորձանմուշների կրկնակի հետազոտությամբ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի՝ ՄԻԱՎ-ի հաստատման լաբորատորիայում,
- 2) երկրորդ եղանակ. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաներում ստուգիչ առաջադրանքների միջոցով տարեկան առնվազն մեկ անգամ կատարվող որակի ուսումնասիրություններ, որոնց ժամանակ այդ լաբորատորիաներում հետազոտվում են նախապես հայտնի օպտիկական խտություններով շճադրական և շճաբացասական արյան շիճուկներ:

## **XI. ՄԻԱՎ ՎԱՐԱԿՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

82. ՄԻԱՎ վարակով պացիենտների մահվան դեպքերի հսկողությունը համաճարակաբանական հսկողության հիմնական ուղղություններից է [36]: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում դիսպանսերային հսկողության մեջ գտնվող պացիենտների մահվան դեպքերի մասին բժշկական օգնության և սպասարկման բաժնից ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժին է ներկայացվում հաղորդում դեպքի մասին տեղեկանալուց անմիջապես հետո: Դրա հիման վրա ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի տվյալների բազայում համաճարակաբանական հսկողության բաժնի մասնագետների կողմից կատարվում է համապատասխան գրառում:

## **XII. ՄԻԱՎ/ՀԱՄԱԿՑՎԱԾ ԵՎ ԶՈՒԳՈՐԴՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

83. Կարևոր նշանակություն ունի ՄԻԱՎ վարակով պացիենտների շրջանում ՄԻԱՎ/հեպատիտ Բ, ՄԻԱՎ/հեպատիտ Ց, ՄԻԱՎ/տուբերկուլոզ համակցված վարակների, ինչպես նաև օպորտունիստական հիվանդությունների նկատմամբ հսկողությունը: Դրանց վերաբերյալ յուրաքանչյուր ամիս կազմվում է ամփոփ հաշվետվություն:

### **XIII. ՄԻԱՎ-Ի ԴԵՂԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

84. ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի առաջնային (փոխանցվող) դեղակայունության հայտնաբերման, ՀՀ-ում դեղակայունության մուտացիաների համաճարակաբանական հսկողության, երկրի տարածքում շրջանառվող ՄԻԱՎ-ի առավել տարածված ենթատիպերի որոշման նպատակով անհրաժեշտ է ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողությունը [37,38,40,41]:
85. Ձեռքբերովի դեղակայունությունը զարգանում է, երբ ի հայտ են գալիս ՄԻԱՎ վիրուսի մուտացիաներ ՀՌՎ բուժում ստացող պացիենտների:
86. Փոխանցվող դեղակայունություն հայտնաբերվում է երբևէ ՀՌՎ բուժում չստացած, վիրուսի դեղակայուն շտամներով վարակված պացիենտների մոտ:
87. Նախաբուժական դեղակայունությունը երբևէ ՀՌՎ բուժում չստացած, կամ նախկինում ՀՌՎ բուժում ստացած, այն դադարեցրած և առաջին շարքի դեղերով բուժումը վերսկսող մարդկանց մոտ արձանագրվող դեղակայունությունն է: Այն կարող է հայտնաբերվել նաև մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում ստացած կանանց, ինչպես նաև նախակոնտակտային կանխարգելում ստացած անձանց մոտ: Ըստ էության նախաբուժական դեղակայունությունը ձեռքբերովի կամ փոխանցվող դեղակայունություն է, կամ 2-ը միասին:
88. Համաձայն ԱՀԿ-ի առաջարկությունների՝ ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողությունը պետք է իրականացվի 3 հիմնական ուղղությամբ՝ ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշների (հավելված 37) վերլուծություն, առաջնային դեղակայունության տարածվածության վերլուծություն, առաջին շարքի դեղերով ՀՌՎ բուժում ստացող պացիենտների շրջանում ՄԻԱՎ-ի դեղակայունության տարածվածության վերլուծություն [37,38,39,43]:
89. Դեղակայունությունը բացասաբար է անդրադառնում բուժման արդյունավետության, հիվանդացության և մահացության նվազեցման վրա: Դեղակայունության նկատմամբ համաճարակաբանական հսկողությունը ներառում է դեղակայունության վաղ կանխման ցուցանիշների ընթացիկ մոնիտորինգ և պարբերական հետազոտություններ պացիենտների որոշակի խմբերում դեղակայունության հայտնաբերման համար: Դեղակայունության վաղ կանխման ցուցանիշներն են ՀՌՎ դեղերի ժամանակին ստացումը, ՀՌՎ բուժման անընդհատությունը, ՀՌՎ դեղերի անխափան մատակարարումը, ՎԾ-ի ճնշվածությունը, ՎԾ-ի հետազոտությունների ծածկույթը: Ցուցանիշների վերլուծությունը և դրա արդյունքների հիման վրա մշակված գործողությունների պլանը նպաստում են բուժման օպտիմալացմանը և նվազեցնում են դեղակայունության առաջացումը: Դեղակայունության վաղ կանխման ցուցանիշների ընթացիկ մոնիտորինգից բացի՝ դեղակայունության վերաբերյալ

պարբերական հետազոտությունները պացիենտների որոշակի խմբերի շրջանում կարևոր են ՀՌՎ բուժման սխեմաների ընտրության և ՎԾ-ի մոնիտորինգի հաճախականության որոշման համար: Այս պարբերական հետազոտությունները թույլ են տալիս իրականացնել դեղակայունության գնահատում երկրի մակարդակով և հետևել դրա զարգացմանը չորս խմբում՝

- 1) ՀՌՎ բուժումն սկսող պացիենտներ՝ ՀՌՎ բուժման առաջին շարքի դեղերի, նախակոնտակտային կանխարգելման սխեմաների ընտրության և ՎԾ-ի հետազոտությունների հաճախականության որոշման համար,
- 2) ՀՌՎ բուժում ստացող պացիենտներ՝ ՀՌՎ բուժման երկրորդ շարքի դեղերի ընտրության և բուժման անընդհատության և ՎԾ-ի ճնշվածության գնահատման համար,
- 3) ՄԻԱՎ-ով նոր վարակված պացիենտներ (դեղակայունության փոխանցում)՝ դեղակայուն վիրուսի փոխանցումն արձանագրելու և բնութագրելու համար,
- 4) 18 ամսականից ցածր տարիքի երեխաներ՝ երեխաների համար ՀՌՎ բուժման առաջին շարքի դեղերի ընտրության նպատակով [37,38,39]:

#### **XIV. ՀՌՎ ԴԵՂԵՐԻ ՏՈՔՍԻԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

90. ՀՌՎ բուժում ստացող պացիենտների մոտ կարող է զարգանալ տոքսիկություն մեկ կամ ավելի ՀՌՎ դեղի նկատմամբ: Ուստի դեղերի տոքսիկության մոնիտորինգը բուժման և կանխարգելման ծրագրերի կարևոր բաղադրիչներից է [11,42,48]: ՀՌՎ դեղերի կողմնակի և տոքսիկ ազդեցությունները դեղերի ընդունման կարգը չպահպանելու, բուժումը դադարեցնելու կամ դեղերի փոփոխման հիմնական պատճառներից են: Ընթացիկ մոնիտորինգը թույլ է տալիս ստանալ տվյալներ ՀՌՎ դեղերի տոքսիկության տարածվածության և դրա դրսևորումների կլինիկական նշանակության, բուժման հետևողականության վրա տոքսիկության ազդեցության, պացիենտների բուժման արդյունքների և դիսպանսերային հսկողության մեջ պացիենտներին պահելու հարցում տոքսիկության ազդեցության վերաբերյալ: Տոքսիկության ընթացիկ մոնիտորինգը զուգակցվում է տոքսիկության համաճարակաբանական հսկողության հետ: Տոքսիկության ընթացիկ մոնիտորինգի հիմնական ցուցանիշն է ՀՌՎ բուժում ստացող պացիենտների տոկոսը, որոնց մոտ նկատվել են բուժման տրամադրումը սահմանափակող տոքսիկության դրսևորումներ՝ կյանքին սպառնացող հիվանդություն/վիճակ, մահ, հոսպիտալացում, հաշմանդամություն, կամ հանգեցրել են բուժման դադարեցման, բուժման սխեմայի փոփոխման: Ցուցանիշի բաշխում կատարվում է՝ ըստ ՀՌՎ բուժման սխեմայի, սեռի, տարիքի, հղիության, տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակի առկայության: Նաև

կարևոր է գնահատել տոքսիկությունը բուժման հետևողականության և դիսպանսերային հսկողությունից դուրս գալու տեսանկյունից: Բուժման արդյունքների բարելավման համար լրացուցիչ տվյալներ ստանալու նպատակով իրականացվում է ՀՌՎ դեղերի տոքսիկության վերաբերյալ համաճարակաբանական հսկողություն երկու ուղղությամբ՝

- 1) տոքսիկության վերաբերյալ ակտիվ համաճարակաբանական հսկողություն ընտրանքային կոհորտներում,
- 2) տոքսիկության վերաբերյալ համաճարակաբանական հսկողություն հղիության և կրծքով կերակրման ընթացքում՝ հղիների մոտ ՀՌՎ դեղերի տոքսիկության հետևանքով բուժման սահմանափակումների մոնիտորինգ, պտղի վրա ՀՌՎ դեղերի տոքսիկության մոնիտորինգ (մեռելաձնություն, վաղաժամ ծննդաբերություն, ցածր քաշ, բնածին անոմալիաներ կամ վաղ մանկական մահացություն), նորածինների և երեխաների վրա ՀՌՎ դեղերի տոքսիկության մոնիտորինգ (աճի և զարգացման հետ կապված ցանկացած դրսևորում) [11,42,48]:

## **XV. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՆՈՐ ԴԵՊՔԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

91. ՄԻԱՎ վարակով հիվանդացության ցուցանիշի որոշումը բնակչության որոշակի խմբում ունի կարևոր նշանակություն ՄԻԱՎ վարակի համաճարակի զարգացման միտումների ճշգրիտ նկարագրման, ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի արդյունավետության գնահատման, ինչպես նաև փոխանցման ուղիների մոնիտորինգի և կանխարգելման նպատակային ծրագրեր մշակելու համար [44,45]:

## **XVI. ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

92. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թվի, ՄԻԱՎ վարակի դեպքերի կանխատեսումներն ունեն կարևոր նշանակություն պլանավորման տեսանկյունից: Կանխատեսումներով ստացվող տվյալները կիրառվում են մի շարք ցուցանիշների հաշվարկման համար [46]: Կանխատեսումները կատարվում են ՄԱԶԻԱՀ-ի «Սպեկտրում» համակարգչային ծրագրով:

**XVII. ՀԱՄԱՃԱՐԱԿԱՔԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

- 93. Համաճարակաբանական հսկողության համակարգի արդյունավետության ընթացիկ գնահատումը կատարվում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետների կողմից:
- 94. Ընթացիկ համաճարակաբանական հսկողության արդյունավետությունը գնահատելու նպատակով տարվա ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող պատահականորեն ընտրված լաբորատորիաներում ուսումնասիրվում է արյան փորձանմուշների հավաքման, գրանցման, պահպանման, հետազոտման, տեղափոխման և դրական դեպքերի մասին հաղորդման գործընթացի համապատասխանությունը սույն ուղեցույցին:
- 95. Ընտրանքային համաճարակաբանական հսկողության արդյունավետությունը գնահատելու համար այդ հսկողության իրականացման ընթացքում պատահականորեն ընտրված ընտրանքային տեղամասերում ուսումնասիրվում է կատարվող աշխատանքների համապատասխանությունը սույն ուղեցույցին:
- 96. Պարբերաբար անհրաժեշտ է իրականացնել համաճարակաբանական հսկողության համակարգի արդյունավետության արտաքին գնահատում [47]:

**XVIII. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԽՈՋԸՆԴՈՏՆԵՐ**

- 97. Սույն ուղեցույցը մշակվել է ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. թիվ 1527-Ա հրամանով հաստատված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունների ազգային ուղեցույցի և գործնական աշխատանքի ձեռնարկի հիման վրա, որը լրամշակվել, վերանայվել է ԱՀԿ-ի և ՄԱԶԻԱՀ-ի ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողությանն առնչվող ժամանակակից առաջարկների հիման վրա: Ըստ էության՝ սույն ուղեցույցը վերոնշյալ գործող ուղեցույցի և գործնական աշխատանքի ձեռնարկի տրամաբանական շարունակությունն է, որում ապացուցողական մոտեցումների կիրառմամբ ներկայացված է ավելի ընդլայնված տեղեկատվություն ՄԻԱՎ վարակի նկատմամբ համաճարակաբանական հսկողության նպատակների և խնդիրների, ՄԻԱՎ վարակի նկատմամբ ընթացիկ և ընտրանքային հսկողության սկզբունքների, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների որակի ապահովման մոտեցումների, հետազոտությունների որակի հսկողության, ԱՎԵԽ-ների չափերի գնահատման սկզբունքների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան դեպքերի գրանցման, համաճարակաբանական հսկողության ժամանակ էթիկական հարցերի, ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողության և ՀՌՎ դեղերի տոքսիկության նկատմամբ համաճարակաբանական հսկողության սկզբունքների,

համաճարակաբանական հսկողության համակարգի արդյունավետության գնահատման վերաբերյալ:

Ուղեցույցի ներդրման համար հնարավորություն են ընձեռում նաև բժշկական կազմակերպություններին ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից մշտապես մեթոդական օգնության և տեխնիկական աջակցության տրամադրումը, ՀՀ առողջապահության նախարարության ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտում ներդրված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով բուժաշխատողների կատարելագործման «ՄԻԱՎ վարակ» դասընթացի շարունակական անցկացումը, որի շրջանակում արդեն իսկ կատարելագործում են անցել տասնյակ համաճարակաբաններ, առողջապահության կազմակերպիչներ:

98. Սույն ուղեցույցը ներդնելիս հնարավոր խոչընդոտներ կարող են լինել՝
- 1) դրամաշնորհային ծրագրերի աջակցությամբ իրականացվող ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ընտրանքային հսկողության ընդհատումը այդ ծրագրերի հնարավոր ավարտից հետո,
  - 2) դրամաշնորհային ծրագրերի աջակցությամբ անցկացվող «ՄԻԱՎ վարակ» դասընթացի ընդհատումը, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն և խորհրդատվություն իրականացնող բժշկական կազմակերպություններին ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից մեթոդական օգնության և տեխնիկական աջակցության տրամադրման խնդիրը դրամաշնորհային ծրագրերի հնարավոր ավարտից հետո:
99. Ուղեցույցը մշակած խմբի համոզմամբ նշված բոլոր խոչընդոտները հաղթահարելի են շահագրգիռ կողմերի նպատակային քայլերի և համակարգված գործողությունների իրականացման դեպքում:

## **XIX. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Ա.Գրիգորյան, Լ.Չոհրաբյան, Ա.Պապոյան և ուրիշներ – ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունների ազգային ուղեցույց և գործնական աշխատանքի ձեռնարկ, 2010, ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական հանրապետական կենտրոն, Երևան: Ասոդիկ, 2011, 278 էջ:
2. Guidelines for second generation HIV surveillance. WHO, UNAIDS; 2000.
3. Guidelines for second generation HIV surveillance: an update: Know your epidemic, World Health Organization; 2013.
4. Surveillance of the HIV/AIDS epidemic: a comprehensive package. World Health Organization; 2013.
5. 2030 Agenda for Sustainable Development.
6. Политическая декларация по ВИЧ и СПИДу: ускоренными темпами к активизации борьбы с ВИЧ и прекращению эпидемии СПИДа к 2030 году, Генеральная Ассамблея ООН, 7 июня, 2016г.
7. UNAIDS 2016-2021 Strategy.
8. Global health sector strategy on HIV, 2016-2021, WHO.
9. План действий сектора здравоохранения по борьбе с ВИЧ-инфекцией в Европейском регионе ВОЗ, 2016-2021.
10. ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 15-ի հ.25 արձանագրային որոշմամբ հավանություն ստացած «ՀՀ-ում 2017-2021թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիր»:
11. Consolidated guidelines on the use of antiretroviral drugs for treating and preventing HIV infection: recommendations for a public health approach - 2nd ed. World Health Organization; 2016.
12. «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման կլինիկական ուղեցույց»՝ հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 04.08.2017թ. N 2412-Ա հրամանով:
13. WHO Recommended Surveillance Standards. Second edition, WHO; 1999.
14. «ՄԻԱՎ վարակի համաճարակաբանական հսկողություն N3.1.1-029-2014 սանիտարահամաճարակաբանական կանոններ և նորմեր», ՄԻԱՎ վարակի համաճարակաբանական հսկողության մեթոդական ուղեցույց՝ հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 29.12.2014թ. N 3175-Ա հրամանով:
15. WHO case definitions of HIV for surveillance and revised clinical staging and immunological classification of HIV-related disease in adults and children. WHO; 2007.
16. Consolidated guidelines on HIV testing services. World Health Organization; 2015.



17. «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենք:
18. Վարչական վիճակագրական հաշվետվական ձև 85:
19. Վարչական վիճակագրական հաշվետվական ձև 88:
20. UNAIDS/WHO. Initiating second generation HIV surveillance systems: practical guidelines. Geneva, UNAIDS; 2002. Available at:  
[http://data.unaids.org/publications/IRC-pub02/jc742-initiatingsgs\\_en.pdf](http://data.unaids.org/publications/IRC-pub02/jc742-initiatingsgs_en.pdf).
21. Guidelines on surveillance among populations most at risk for HIV. WHO, UNAIDS; 2011.
22. Guidelines for assessing the utility of data from prevention of mother-to-child transmission (PMTCT) programmes for HIV sentinel surveillance among pregnant women. WHO; 2013.
23. Paediatric HIV surveillance among infants and children less than 18 years of age. World Health Organization; 2013.
24. Guidelines for conducting HIV surveillance among pregnant women attending antenatal clinics based on routine programme data. World Health Organization; 2015.
25. Guiding principles on Ethical issues in HIV surveillance. UNAIDS/WHO Working Group on Global HIV/AIDS and STI Surveillance; 2013.
26. Magnani Robert, Sabin Keith, Saidel Tobi, Heckathorn Douglas D. Review of Sampling Hard-to-Reach and Hidden Populations for HIV Surveillance. AIDS 2005. 2005;19 Suppl2:S67–S72.
27. Rea, Louis, Designing and Conducting Survey Research, Jossey-Bass; 2nd edition (June 20, 1997), 272 pages.
28. <http://www.raosoft.com/samplesize.html>
29. Guidelines on Estimating the Size of Populations Most at Risk to HIV, WHO/UNAIDS; 2010.
30. Lisa G. Johnston and Keith Sabin. Sampling hard-to-reach populations with respondent driven sampling 2010, Methodological Innovations Online (2010) 5(2) 38-48.
31. Guidelines for Conducting HIV/AIDS Risk Behavioural Surveillance Surveys. WHO; 2004.
32. Richard G. Whitea, et al.: Strengthening the Reporting of Observational Studies in Epidemiology for respondent-driven sampling studies: “STROBE-RDS” statement. J Clin Epidemiol. 2015 Dec;68(12):1463-71.
33. Heckathorn D. Respondent-driven sampling: a new approach to the study of hidden populations. Social Problems 1997; 44:174–199.
34. Lisa G. Johnston, Katherine R. McLaughlin, Houssine El Rhilani, Amina Latifi, Abdalla Toufik, Aziza Bennani, Kamal Alami, Boutaina Elomari, and Mark S. Handcock.

Estimating the Size of Hidden Populations Using Respondent-driven Sampling Data. Case Examples from Morocco; Epidemiology 2015.

35. International Ethical Guidelines for Health-related Research Involving Humans, Fourth Edition. Geneva. Council for International Organizations of Medical Sciences (CIOMS); 2016.
36. Guidelines for HIV mortality measurement. WHO; 2014
37. Global strategy for the surveillance and monitoring of HIV drug resistance. WHO; 2012.
38. HIV drug resistance surveillance guidance – 2015 update. WHO; 2015.
39. Guidelines on the public health response to pretreatment HIV drug resistance. WHO; 2017.
40. Global action plan on HIV drug resistance 2017-2021. WHO; 2017.
41. Surveillance of HIV drug resistance in adults receiving ART (acquired HIV drug resistance), WHO; 2014
42. Supplement to the 2013 consolidated guidelines on the use of antiretroviral drugs for treating and preventing HIV infection. Geneva: World Health Organization; March 2014.
43. ՀՀ-ում 2017-2021 թվականներին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի մոնիտորինգի և գնահատման պլան՝ հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 03.07.2017թ. N 2132-Ա հրամանով:
44. Estimating HIV incidence using HIV case surveillance. UNAIDS/WHO Working Group on Global HIV/AIDS and STI Surveillance, WHO; 2015.
45. Technical update on HIV incidence assays for surveillance and monitoring purposes UNAIDS/WHO; 2015.
46. Consolidated strategic information guide for HIV in the health sector. World Health Organization; 2015.
47. Evaluating a national surveillance system. UNAIDS/WHO; 2013.
48. «Հակառետրովիրուսային դեղերի կիրառմամբ ՄԻԱՎ վարակի բուժման և կանխարգելման կլինիկական ուղեցույց»՝ հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 07.08.2017թ. N 2429-Ա հրամանով:

**ԱՌԱՋԱՐԿՆԵՐ**

**ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՎԱԾ ԸՍՏ ՈՒԺԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՈՐԱԿԻ**

1. ՄԻԱՎ-ի վերաբերյալ ինքնաթեստավորումը առաջարկվում է որպես լրացուցիչ մոտեցում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների շրջանակում (ուժեղ առաջարկ, ապացույցների միջին որակ):
2. Մինչև 18 ամսական երեխաների մոտ ՄԻԱՎ վարակի ախտորոշման համար կատարվում է ՊՇՌ մեթոդով ՄԻԱՎ-ի ԴՆԹ-ի հայտնաբերմանն ուղղված հետազոտություն (ուժեղ առաջարկ, ապացույցների բարձր որակ):
3. ՄԻԱՎ վարակով մայրերից ծնված նորածինների երկրորդ վիրուսաբանական հետազոտությունը կատարվում է 4-6 շաբաթականում (ուժեղ առաջարկ, ապացույցների բարձր որակ):
4. Ծնվելուց հետո 48 ժամվա ընթացքում կատարված առաջին վիրուսաբանական հետազոտության դրական արդյունքի դեպքում երեխան համարվում է ենթադրաբար ՄԻԱՎ-ով վարակված, և նրան պետք է անմիջապես տրամադրել ՀՌՎ բուժում (ուժեղ առաջարկ, ապացույցների բարձր որակ):
5. 18 ամսականից մեծ երեխաների մոտ ՄԻԱՎ վարակի վերջնական ախտորոշման նպատակով կատարվում է շճաբանական հետազոտություն՝ ըստ մեծահասակների համար կիրառվող ստանդարտ ախտորոշման ալգորիթմի (ուժեղ առաջարկ, ապացույցների բարձր որակ):

**ՄԻԱՎ ՎԱՐԱԿ ԴԵՊՔԻ ՍՏԱՆԴԱՐՏ ՍԱՀՄԱՆՈՒՄ**

**ՄԻԱՎ վարակի ախտորոշման չափանիշներ**

**Կլինիկական ախտորոշում՝** բացակայում է

**Լաբորատոր ախտորոշման չափանիշներ**

• **Մեծահասակների և 18 ամսականից մեծ երեխաների մոտ**

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների դրական արդյունք հաստատված իմունաբլոտի կամ Վեստերն Բլոտի մեթոդով՝ համաձայն 18 ամսականից մեծ երեխաների և մեծահասակների մոտ

ՄԻԱՎ վարակի ախտորոշման նպատակով հետազոտությունների ռազմավարության

• **Մինչև 18 ամսական երեխաների մոտ**

ՊՇՌ մեթոդով ՄԻԱՎ-ի ԴՆԹ-ի հայտնաբերման հետազոտությունների դրական արդյունք՝ համաձայն մինչև 18 ամսական երեխաների մոտ ՄԻԱՎ վարակի ախտորոշման համար հետազոտությունների ռազմավարության


**ՄԻԱՎ վարակի դեպքի դասակարգում**

**Կասկածելի՝** գոյություն չունի


**Հավանական՝** գոյություն չունի

**Հաստատված՝** լաբորատոր հաստատված դեպք

ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԿՐԻՆԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ




ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (18 ԱՄՍԱԿԱՆԻՑ ՄԵԾ ԵՐԵԽԱՆԵՐ ԵՎ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐ)



\* ՄԻԱՎ-ի ԴՆԹ-ի որոշում ՊՇՌ մեթոդով

**ՄԻՆՉԵՎ 18 ԱՄՍԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**



\* ՄԻԱՎ-ի ԴՆԹ-ի որոշում ՊՇՈՒ մեթոդով

Ուղեգիր Հ. \_\_\_\_\_

ԱՐՅԱՆ ՄԵՋ ՄԻԱՎ-Ի ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ

արյուն/արյան շիճուկ ուղարկող բուժհիմնարկի անվանումը

Հերթական հ. Գրանցման հ.	Անուն, ազգանուն, հայրանուն	Սեռ	Ծննդյան թիվ	Անձնագրի սերիա, համար	Հասցե	Կող.	Արյուն վերցնելու օր	Կլինիկական ախտորոշում*	Հետազոտության պատասխան

\* Հղիների արյան ուղեգրման դեպքում սյունյակում անհրաժեշտ է կատարել նշում այն մասին, թե որերորդ հետազոտությունն է՝ «առաջնային, հղիության ժամկետ» և «կրկնակի, հղիության ժամկետ»:

Ուղեգրող բուժհիմնարկի տնօրեն՝ \_\_\_\_\_ /ազգանուն, անուն/ \_\_\_\_\_ /ստորագրություն/

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ.



ՈՒՂԵԳԻՐ Հ. \_\_\_\_\_

**ԱՐՅԱՆ ՄԵՋ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Ազգանուն, անուն, հայրանուն՝ \_\_\_\_\_ Սեռ՝ \_\_\_\_\_  
 Ծննդյան թիվ՝ \_\_\_\_\_ Ծածկագիր՝ \_\_\_\_\_ Անձնագիր՝ \_\_\_\_\_  
 Հասցե՝ \_\_\_\_\_ Նմուշառման ամսաթիվ՝ \_\_\_\_\_  
 Կլինիկական ախտորոշում՝ \_\_\_\_\_

<b>Իմունաֆերմենտային հետազոտություն</b>	<b>I հետազոտություն</b>	<b>II հետազոտություն</b>
Ամսաթիվը		
Թեստ համակարգը		
Սերիայի հ.		
Օպտիկական խտության (ՕԽ) հսկողությունը		
Օպտիկական խտության (ՕԽ) փորձանմուշը		
Արագ թեստավորում	I հետազոտություն	II հետազոտություն
Ամսաթիվը		
Թեստ հավաքածուն		
Սերիայի հ.		

Ուղեգրող բուժհիմնարկ՝ \_\_\_\_\_

Հասցե՝ \_\_\_\_\_ Հեռախոս՝ \_\_\_\_\_  
 (մարզ, բնակավայր, փողոց, շենք)

Լաբորատորիայի վարիչ \_\_\_\_\_ (անուն, ազգանուն) \_\_\_\_\_ (ստորագրություն)

Տնօրեն \_\_\_\_\_ (անուն, ազգանուն) \_\_\_\_\_ (ստորագրություն)

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

Կ.Տ.

ՇՏԱՊ ՀԱՂՈՐԴՈՒՄ\*  
ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

h. \_\_\_\_\_

Ա.Ա.Հ.՝ \_\_\_\_\_

Փորձանմուշի հ.՝ \_\_\_\_\_ Ծննդյան տարեթիվ՝ \_\_\_\_\_ Սեռ՝ \_\_\_\_\_ Ծածկագիր՝ \_\_\_\_\_

Լաբորատորիայի վարիչ՝ \_\_\_\_\_

\* Լրացվում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի լաբորատոր ակտորոշման բաժնի կողմից և տրամադրվում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժնին:

**ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ Հ. \_\_\_\_\_**

(ՄԻԱՎ վարակով պացիենտի)

Ազգանուն, անուն, հայրանուն՝ \_\_\_\_\_

Սեռ՝  ար  իգ

Ծածկագիր՝ \_\_\_\_\_ Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝ \_\_\_\_\_ Քաղաքացիություն՝ \_\_\_\_\_

Հասցե՝ մարզ \_\_\_\_\_  քաղաք  գյուղ \_\_\_\_\_

Զբաղվածություն՝

սովորող  միգրանտ  չի աշխատում  աշխատում է \_\_\_\_\_

Ընտանեկան դրություն՝

ամուրի  ամուսնացած  ամուսնալուծված  այրի

Հետազոտման պատճառ՝

կարգավիճակի ճշտում  կլինիկական ցուցում  պարտադիր

Գանգատներ՝ \_\_\_\_\_

Վարակման հավանական ուղիները	Վարակման հավանական տեղը	Ժամանակահատված/ ամսաթիվ
Սեռական հարաբերություն ՄԻԱՎ վարակ ունեցողի կամ շճադրականի հետ		
Սեռական հարաբերություն անհայտ կարգավիճակով անձի հետ		
Հոմոսեքսուալ հարաբերություն		
Թմրամիջոցների ներարկային գործածում		
Պարենտերալ միջամտություններ բժշկական կազմակերպություններում		
Պարենտերալ միջամտություններ ոչ բժշկական հաստատություններում		
Արյան և դրա բաղադրամասերի ներարկում		
ՄԻԱՎ վարակ ունեցող մորից		

Կրած հիվանդությունները	Հիվանդանալու ժամանակը
Սեռավարակներ	
Պարենտերալ հեպատիտներ	
Տուբերկուլոզ	
Այլ հիվանդություններ	

Ախտանշաններ	Ի հայտ գալու ժամանակը
Տենդ (անկանոն, անբացատրելի)	
Արտահայտված քրտնարտադրություն	
Ավշային հանգույցների մեծացում	
Մաշկային ցան	
Լուծ (1 ամսից ավելի)	
Քաշի կորուստ	
Այլ	

Հետազոտություն	Ամսաթիվ			Արդյունք		
	1	2	3	1	2	3
ԻՖԱ / արագ թեստ						
Իմունաբլոտ						
ՊՇՌ						

**Տեղեկություններ կոնտակտավորների մասին**

Ա.Ա.Հ.	Տարիք	Հասցե	Կոնտակտի բնույթը և մոտավոր ժամանակը

**Կոնտակտավորների լաբորատոր հետազոտություններ**

Ա.Ա.Հ.	Կատարված հետազոտությունը	Ամսաթիվ	Արդյունք

**Հետևություններ կատարված համաճարակաբանական հետազոտությունից**

Վարակման մոտավոր ժամկետները	Վարակման հավանական տեղը	Վարակի փոխանցման առավել հավանական ուղին	Վարակմանը նպաստող պայմանները, գործոնները

Այլ տեղեկություններ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Հետազոտությունը կատարել է  
բժիշկ-համաճարակաբան՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն, հայրանուն)

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

**ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ Հ. \_\_\_\_\_**

(ՄԻԱՎ վարակով երեխայի)

Ազգանուն, անուն, հայրանուն \_\_\_\_\_

Սեռ՝  ար  իգ Կողմ \_\_\_\_\_ Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝ \_\_\_\_\_ Ծննդավայր՝ \_\_\_\_\_

Հասցե՝ մարզ \_\_\_\_\_  քաղաք  գյուղ \_\_\_\_\_

Կազմակերպված մանկական կոլեկտիվ հաճախելը՝

հաճախում է  չի հաճախում

Հետազոտման պատճառ՝

Կարգավիճակի ճշտում  Կլինիկական ցուցում  Պարտադիր

Ներկա առողջական վիճակը՝ \_\_\_\_\_

**Տեղեկություններ երեխայի մասին**

Երեխան ծնվել է՝  հասուն  անհաս  երկվորյակներից

Ծննդատանը՝  \_\_\_\_\_,  տանը

Ծննդաբերությունը՝  նորմալ  ախտաբանական

Վիրաբուժական միջամտություններ՝  ամնիոտոմիա  էպիգլոտոմիա

կեսարյան հատում

Անտրոպոմետրիկ տվյալները ծնվելիս		Կերակրումը (որ հասակից մինչև որ հասակը)			Կրած հիվանդությունները	Ստացած կանխարգելիչ պատվաստումները	Հակառետրովիրուսային բուժում
Քաշ	Հասակ	Կրծքով	Խառը	Արհեստական			

Ախտանշաններ	Ի հայտ գալու ժամանակը
Տենդ (անկանոն, անբացատրելի)	
Արտահայտված քրտնարտադրություն	
Ավշային հանգույցների մեծացում	
Ըմպանաբորբ (ֆարինգիտ)	
Մաշկային ցան	
Լուծ (1 ամսից ավելի)	
Քաշի կորուստ	
Այլ	

Հետազոտություն	Ամսաթիվ			Արդյունք		
	1	2	3	1	2	3
ՊՇՌ						
ԻՖԱ /արագ թեստ						
Իմունաբլոտ						

**Ընտանիքի անդամների լաբորատոր հետազոտություններ**

Հ.	Ա.Ա.Հ.	Կատարված հետազոտությունը	Ամսաթիվ	Արդյունք

**Տեղեկություններ մոր մասին**

Ա.Ա.Հ.	Տարիք	ՄԻԱՎ-կարգավիճակը		Վարքագծային գործոններ	Հակառետրով իրուսային բուժում
		Մինչև հղիությունը	Հղիության ընթացքում		

Մայրն ունեցել է \_\_\_\_\_ հղիություն, որոնցից ավարտվել են ծննդաբերությամբ՝ ժամանակին \_\_\_\_\_, վաղաժամ \_\_\_\_\_:

Ծնվել է՝ կենդանի երեխա \_\_\_\_\_, մահացած պտուղ \_\_\_:

Ներկայումս երեխաների թիվն ընտանիքում՝ \_\_\_\_\_:

**Հետևություններ կատարված համաճարակաբանական հետազոտությունից**

Վարակի փոխանցման առավել հավանական մեխանիզմը	Վարակմանը նպաստող պայմանները, գործոնները

Այլ տեղեկություններ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Հետազոտությունը կատարել է  
բժիշկ-համաճարակաբան՝ \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն, հայրանուն)

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.



**ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏ Հ. \_\_\_\_\_**  
(ՄԻԱՎ վարակով պացիենտի)

Ա.Ա.Հ.՝ \_\_\_\_\_ Քաղաքացիություն՝ \_\_\_\_\_  
Ծածկագիր՝ \_\_\_\_\_ Անձնագիր՝ \_\_\_\_\_  
Հասցե՝ մարզ \_\_\_\_\_  քաղաք  գյուղ \_\_\_\_\_  
Հեռ.՝ \_\_\_\_\_

Հեղթական հ.	Տարեկան հ.	Ծննդյան օրը/տարեթիվ	Սեռ	ՄԻԱՎ-ի հաստատման ամսաթիվ	Տարիքը ՄԻԱՎ-ի ախտորոշման ժամանակ	ՄԻԱՎ-ի հաշվառման ամսաթիվ	ՁԻԱՀ-ի ախտորոշման ամսաթիվ	Տարիքը ՁԻԱՀ-ի ախտորոշման ժամանակ	ՁԻԱՀ-ի հաշվառման ամսաթիվ	Մահվան ամսաթիվ	Մահվան հաշվառման ամսաթիվ

**ՎԱՐԱԿՄԱՆ ԱՌԱՎԵԼ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՈՒՂԻՆ**

- Հոմոսեքսուալ հարաբերություն
- Հետերոսեքսուալ հարաբերություն
- Թմրամիջոցների ներարկային գործածում
- Մասնագիտական վարակում
- Արյան փոխներարկում, օրգանների, հյուսվածքների, կենսաբանական հեղուկների փոխապատվաստում
- Մորից երեխային
- Այլ (նշել) \_\_\_\_\_

**ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հետազոտություններ	Ամսաթիվ			Արդյունք		
	1	2	3	1	2	3
ԻՖԱ/արագ թեստ						
Իմունաբլոտ						
ՊՇՌ						

**ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ**

- Բուժաշխատողի նախաձեռնությամբ բժշկական կազմակերպություններում
- Բուժաշխատողի նախաձեռնությամբ քրեակատարողական հիմնարկներում
- Բուժաշխատողի նախաձեռնությամբ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում
- Արտերկրում ախտորոշված և ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում հաստատված
- Այցելուի նախաձեռնությամբ
- Աութրիչ ծառայություններ տրամադրողների նախաձեռնությամբ

Առաջնակի դիմելու հաստատություն՝ \_\_\_\_\_

Ախտորոշման պահին կլինիկական փուլը՝  I  II  III  IV

Հետազոտությունը կատարել է բժիշկ-համաճարակաբան՝ \_\_\_\_\_

(անուն, ազգանուն, հայրանուն)

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.



Մարզը \_\_\_\_\_

Համայնքը \_\_\_\_\_

Պետական գրանցման հասցեն \_\_\_\_\_  
(փոստային դասիչը)

Գործունեության իրավաբանական  
հասցեն /գտնվելու վայրը/ \_\_\_\_\_  
(փոստային դասիչը)

Էլեկտրոնային փոստի հասցեն \_\_\_\_\_@\_\_\_\_\_

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՆՆԴԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

\_\_\_\_\_ 20 թ.

Ղեկավար

Կատարող \_\_\_\_\_

Անուն, ազգանուն \_\_\_\_\_

Հեռ. \_\_\_\_\_

Պաշտոն \_\_\_\_\_

Ստորագրություն \_\_\_\_\_

**Բաժին I. Հաշվետու ամսում/տարում արձանագրված վարակիչ հիվանդություններ, սննդային, քիմիական թունավորումներ, ճառագայթային ախտահարումներ\***

Վարակիչ հիվանդության /սննդային թունավորման անվանումը	Տողի համարը	Ծածկագիրն՝ ըստ ՀԴ 014-2013 (ՀՄԴ 10)	Գրանցված հիվանդության դեպքեր, ընդամենը	այդ թվում՝			Գրանցվել են հիվանդներ մահվան ելքով			
				կանանց մոտ	Մինչև 18 տարեկան (17 տարեկան 11 ամսական 29 օրական)	նրանց ից	Սինչև 18 տարեկան (17 տարեկան 11 ամսական 29 օրական)			
							0-2 տարեկան	3-6 տարեկան	ընդամենը	
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8
<b>ԱՂԻՔԱՅԻՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>										
Որովայնային տիֆ	1.	A 01.0								
Պարատիֆ Ա (A)	2.	A 01.1,								
Պարատիֆ Բ (B)	3.	A 01.2,								
Պարատիֆ Ց (C)	4.	A 01.3								
Չճշտված պարատիֆեր	5.	A 01.4								
Այլ սպլոննեյլոզային վարակներ	6.	A 02								
Շիգելյոզ, այդ թվում՝	7.	A 03								
շիգելյոզ՝ հարուցված շիգելա դիզենտերիայով	7.1	A 03.0								
շիգելյոզ՝ հարուցված շիգելա ֆլեքսներով	7.2	A 03.1								
շիգելյոզ՝ հարուցված շիգելա բոլիդով	7.3	A 03.2								
շիգելյոզ՝ հարուցված շիգելա զոնեով	7.4	A 03.3								
այլ շիգելյոզ	7.5	A 03.8								
չճշտված շիգելյոզ	7.6	A 03.9								
Այլ մանրէային աղիքային վարակներ, այդ թվում՝	8.	A 04								
Էնտերոպաթոգեն վարակ՝ հարուցված էշերիխիա կոլիով	8.1	A 04.0								
Էնտերոտոքսիգեն վարակ՝ հարուցված էշերիխիա կոլիով	8.2	A 04.1								

Էնտերոինվազիվ վարակ՝ հարուցված էշերիխիա կոլիով	8.3	A 04.2							
Էնտերոհենոռագիկ վարակ՝ հարուցված էշերիխիա կոլիով	8.4	A 04.3							
Այլ աղիքային վարակներ՝ հարուցված էշերիխիա կոլիով	8.5	A 04.4							
Կամպիլոբակտերիոզ	8.6	A 04.5							
Էնտերիտ՝ յերսինիա Էնտերոկոլիտիկայից առաջացած	8.7	A 04.6							
Էնտերոկոլիտ՝ կլոստրիդիում դիֆիցիլիեից առաջացած	8.8	A 04.7							
Այլ ճշտված մանրէային աղիքային վարակներ	8.9	A 04.8							
Ռոտավիրուսային Էնտերիտ	9.	A 08.0							
Նորովյ կարուցիզով հարուցված սուր գաստրոէնտերոպաթիա	10.	A 08.1							
Ամեոբիազ	11.	A 06							
Այդ թվում՝ չճշտված	11.1	A06.9							
Ժիարդիազ (յամբլիոզ)	12.	A 07.1							
Բալանտիդիազ	13.	A 07.0							
Կրիպտոսպորիդիոզ	14.	A 07.2							
Ճշտված այլ աղիքային վարակներ	15.	A 07.8, A 08.5							
Չճշտված և ենթադրյալ աղիքային վարակներ	16.	A 04.9, A 07.9, A 09							
<b>ՏՈՒՔԵՐԿՈՒՆՈՋ</b>									
Շնչառական օրգանների տուբերկուլոզ այդ թվում՝	17.	A 15 - A 16							
հաստատված մանրէաբանորեն կամ հյուսվածքաբանորեն	17.1	A 15							
չհաստատված մանրէաբանորեն կամ հյուսվածքաբանորեն	17.2	A 16							
Տուբերկուլոզային մենինգիտ	18.	A 17.0 (G01)							
Արտաթոքային տուբերկուլոզ	19.	A 17, A 18, A 19							
<b>ՈՐՈՇ ՄԱՆՐԵԱՅԻՆ ՀՈՒՆՈՋՆԵՐ</b>									
Տուբարեմիա	20.	A 21							
Սիբիրյան խոց	21.	A 22							
Բրուցելոզ՝ առաջնակի հաստատված բոլոր ձևերը	22.	A 23, A 23.0, A 23.1, A 23.2, A 23.3, A 23.9							
Առաջնակի հայտնաբերված քրոնիկ բրուցելոզ	23.								

Լեպտոսպիրոզ	24.	A 27								
<b>ԱՅԼ ՄԱՆՐԷԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>										
Լիստերիոզ	25.	A 32								
Նորածնի պրկախտ (փայտացում)	26.	A 33								
Մանկաբարձական պրկախտ (փայտացում)	27.	A 34								
Պրկախտ (փայտացում)	28.	A 35								
Դիֆթերիա	29.	A 36								
Կապոյտ հազ / Հարկապոյտ հազ	30.	A 37 (A 37.0, 37.1)								
Քուպեշ	31.	A 38								
Մենինգոկոկային վարակ՝ բոլոր ձևերը	32.	A 39								
Այլ մանրէային մենինգիտներ	33.	G 00								
Ստրեպտոկոկային սեպտիցեմիա	34.	A 40								
Այլ սեպտիցեմիա	35.	A 41								
Գազային գանգրենա	36.	A 48.0								
Լեզիոնելոզ	37.	A 48.1								
Նորածինների մանրէային սեպսիս	38.	P 36								
Ներարգանդային հիվանդություններ նորածինների մոտ	39.									
<b>ՌԻԿԵՏՑԻՈՂՆԵՐ</b>										
Բժավոր տիֆ	40.	A 75, A 76, A 77, A 78, A 79								
Համաճարակային բժավոր տիֆ այդ թվում՝	41.	A 75.0								
Բրիլի հիվանդություն	41.1	A 75.1								
<b>ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐ</b>										
Սուր պոլիոմիելիտ	42.	A 80								
Սուր թորշոմաձ կաթված	43.	G 61.0								
Կատաղություն	44.	A 82								
Կենդանիների կողմից տուժելու դեպքեր	45.									
Վիրուսային չճշտված էնցեֆալիտ	46.	A 86								
Վիրուսային մենինգիտ	47.	A 87								
<b>ՄԱՇԿԻ ԵՎ ԼՈՐՁԱԹԱՂԱՆԹՆԵՐԻ ԱՆՏԱՀԱՐՈՒՄՆԵՐՈՎ ԲՆՈՐՈՇՎՈՂ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐ</b>										
Հերպես վիրուսից առաջացած վարակներ	48.	B 00								
Ջրծաղիկ	49.	B 01								
Կարմրուկ	50.	B 05								
Կարմրախտ	51.	B 06								
Բնածին կարմրախտային համախտանիշ	52.	P 35.0								

<b>ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐ</b>									
Վիրուսային հեպատիտներ, այդ թվում	53.	B 15- 19							
Սուր հեպատիտ Ա	53.1	B 15							
Սուր հեպատիտ Բ	53.2	B 16							
Սուր հեպատիտ Ց	53.3	B 17.1							
Սուր հեպատիտ Ե	62.4	B 17.2							
Չճշտված վիրուսային հեպատիտ	53.5	B 19							
Համակցված սուր վիրուսային հեպատիտներ	54.	B 15, B 16, B17.1, B 17.2, B 17.8							
Առաջնակի հայտնաբերված քրոնիկ հեպատիտներ	55.	B18							
այդ թվում՝ առաջնակի հայտնաբերված քրոնիկ հեպատիտ Բ	55.1	B18.0, B18.1							
այդ թվում՝ առաջնակի հայտնաբերված քրոնիկ հեպատիտ Ց	55.2	B18.8							
Առաջնակի հայտնաբերված քրոնիկ համակցված վիրուսային հեպատիտներ	56.								
<b>ՄԱՐԴՈՒ ԻՍՏՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ</b>									
ՄԻԱՎ վարակ	57.	B 20-24							
ՄԻԱՎ/վիրուսային հեպատիտ B համակցված վարակ	58.								
ՄԻԱՎ/վիրուսային հեպատիտ C համակցված վարակ	59.								
ՄԻԱՎ/տուբերկուլոզ համակցված վարակ	60.								
ՄԻԱՎ/այլ հիվանդություններ համակցված վարակ	61.								
<b>ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>									
Ցիտոմեգալովիրուսային հիվանդություն /	62.	B 25							
Համաճարակային պարոտիտ	63.	B 26							
Վարակային մոնոնուկլեոզ	64.	B 27							
Վիրուսային վարակ չճշտված տեղակայումով	65.	B 34							
<b>ՆԱԽԱԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>									
Պնևմոցիստոզ	66.	B 59							
Տոքսոպլազմոզ	67.	B 58							
Մալարիա, *** այդ թվում՝	68.	B 50- B 54							
մալարիա՝ հարուցված պլազմոդիում ֆալցիպարումով	68.1	B50							
մալարիա՝ հարուցված պլազմոդիում վիվաքսով	68.2	B 51							
մալարիա՝ հարուցված պլազմոդիում մալարիայով	68.3	B52							
մակաբուժաբանորեն հաստատված մալարիայի այլ տեսակներ	68.4	B53							



Լեյզմանիոզներ, այդ թվում՝	69.	B 55								
ընդերային	69.1	B 55.0								
<b>ՀԵՆՏԻՆԹՈՂՆԵՐ</b>										
Շիստոսոմոզ	70.	B 65								
Այլ տրեմատոդոզներ	71.	B 66								
Էխինակոկոզ	72.	B 67								
Տենիոզ	73.	B 68.0								
Տենիարինխոզ	74.	B 68.1								
Ցիստիցերկոզ	75.	B 69								
Դիֆիլոբոթրիոզ	76.	B 70.0								
Հիմենոլեպիդոզ	77.	B 71.0								
Տրիխինելոզ	78.	B 75								
Անկիլոստոմիդոզ	79.	B 76								
Ասկարիդոզ	80.	B 77								
Տրիխոցեֆալոզ	81.	B 79								
Ստրոնգիլոիդոզ	82.	B 78								
Էնտերոբիոզ	83.	B 80								
Չճշտված աղիքային հելմինթոզներ	84.	B 82.0								
Այլ հելմինթոզներ	85.	B 83								
<b>ՈՋԼՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՈՍ</b>										
Ոջլոտություն	86.	B 85								
Քոս	87.	B 86								
<b>ԳՐԻՊ ԵՎ ԹՈՔԱՐՈՐԸ</b>										
Գրիպ՝ հարուցված այլ նույնականացրած գրիպի վիրուսով	88.	J 10								
Գրիպ թոքաբորբով, նույնականացրած գրիպի այլ վիրուսով	89.	J10.0								
Գրիպ՝ վիրուսը նույնականացրած չէ	90.	J 11								
Վիրուսային թոքաբորբ՝ այլ դասերում չդասակարգված	91.	J12, J12.0, J12.1, J12.2, J12.8, J12.9								
Թոքաբորբ՝ հարուցված թո- քաբորբային ստրեպտոկով	92.	J13								
Թոքաբորբ՝ հարուցված հենոֆիլուս ինֆլուենզիայով (Աֆանասև-Պֆեյֆերի ցուպիկով)	93.	J14								
Մանրէային թոքաբորբ՝ այլ դասերում չդասակարգված	94.	J15, J15.1 J15.2, J15.3, J15.4, J15.5 J15.6, J15.7, J15.8, J15.9								
Թոքաբորբ, առաջացած այլ վարակիչ հարուցիչներից, չդասակարգված այլ խորագրերում	95.	J16, J16.0 J16.8								

Թոքաբորբ, չճշտված հարուցչով	96.	J18, J18.0, J18.1, J18.2 J18.8, J18.9								
<b>ՎԱՐԱԿԱԿՐՈՒԹՅՈՒՆ</b>										
Որովայնային տիֆի վարակակիրներ	97.	Z 22.0								
Ստամոքս-աղիքային այլ վարակիչ հիվանդությունների հարուցչի վարակակրություն	98.	Z 22.1								
Դիֆթերիայի տոքսիգեն շտամների մանրէակիրներ	99.	Z 22.2								
Մալարիայի մակաբուծակիրներ	100.	Z 22.8								
Մարդու իմունային անբավարարության՝ ՄԻԱՎ-ի վարակակրություն	101.	Z 21								
Հեպատիտ Բ-ի վիրուսակրություն	102.									
Հեպատիտ Յ-ի վիրուսի հանդեպ հակամարմինների առկայությամբ անձինք	103.									
<b>ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ</b>										
<b>Մանրէային սննդային թունավորումներ, այդ թվում՝</b>	104.	A 05								
